ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Օրենքի հիման վրա ձևավորված իրավակիրառ պրակտիկայի և տնտեսական գործունեության ազատության ու ազատ տնտեսական մրցակցության, իրավական պետության, վարչարարության համաչափության, դատական արդյունավետ պաշտպանության սկզբունքների միջև առկա հնարավոր հակասությունները:

Արա Ղազարյան
Արտակ Զեյնալյան
Դավիթ Ասատրյան
Ռուստամ Բադասյան

Ազատ տնտեսական գործունեության ազատության իրականացման նպատակով

Սույն հետազոտությունը կատարվել է «Հայկական Ծրագրեր» ՍՊ Ընկերության նախաձեռնությամբ և ֆինանսական աջակցությամբ: Սույն հետազոտության մեջ տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակները «Արևի Քնսալթ» ՍՊ ընկերությունը, Արա Ղազարյանը, Արտակ Զեյնալյանը, Դավիթ Ասատրյանը, Ռոստոմ Բադալյան են, ովքեր էլ միայն պատասխանատու են նյութի բովանդակության համար: Հետազոտության մեջ արտահայտված են հեղինակների կարծիքները և հաստատված չեն «Հայկական Ծրագրեր» ՍՊ Ընկերության կողմից, հետևաբար չեն ներկայացնում «Հայկական Ծրագրեր» ՍՊ Ընկերության դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն հետազոտության բովանդակությունը կարող է չհամընկնել «Հայկական Ծրագրեր» ՍՊ Ընկերության տեսակետներին:

ՑԱՆԿ

Հետազոտության մեջ օգտագործվող հապավումներ և պայմանական անվանումներ .. 3

Նախաբան ……..… 4

1. Տնտեսական գործունեության ազատության իրականացման նախադրյալները …... 6

2. Հանձնաժողովի վարչարարության համաչափությունը ……..……..…… 10

3. Տնտեսական գործունեության ազատության սահմանափակման
   չափանիշները իրավական պետությունում ……...……...…. 14

4. Պաշտպանության իրավունքը ապահովող կառուցակարգերը, ՀՀ-ԵՄ փորձի
   համեմատական վերլուծություն ……..……..……. 17

5. Օրենքի հիման վրա ձևավորված պրակտիկան և դատական
արդյունավետ պաշտպանության իրավունքի իրացումը ……..……. 27

6. Օրենքի հիման վրա ձևավորված Հանձնաժողովի պրակտիկան ……..…. 42

7. Հանձնաժողովի կողմից կայացված որոշումների 2001-2015թթ.
   վիճակագրությունը և գործունեության թափանցիկությունը …….. 48

8. Հանձնաժողովի վարչարարությունը ……... 53

9. Հանձնաժողովի կողմից խախտում արձանագրելու եղանակը …….……. 56

10. Առաջարկություններ ……... 66

Հետազոտության մեջ օգտագործվող հապավումներ և պայմանական անվանումներ

Հայաստանի Հանրապետություն – Հայաստան, ՀՀ,

Եվրոպական Միություն – ԵՄ,

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք – Օրենք,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք – Վարչարարության հիմունքների մասին օրենք,

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով – Հանձնաժողով:

ՆԱԽԱԲԱՆ

1. Ներքոգրյալ ուսումնասիրության և վերլուծության մեջ անդրադարձ է կատարվում տնտեսական մրցակցության հետ կապված իրավահարաբերությանը և դրա իրավակիրառ պրակտիկային: Ուսումնասիրության և վերլուծության մեջ նաև կքննարկվի և վեր կհանվի վարչարարության համաչափության, տնտեսական գործունեության ազատության, դատական պաշտպանության իրականացման ընթացքում արձանագրված խնդիրներին և այդ խնդիրները կհամադրվեն ազատ տնտեսական մրցակցության ազատության սահմանադրորեն ամրագրված սկզբունքի հետ:
2. Սահմանադրական սկզբունքի իրավակիրառ իրացումը ավելի գործնական տեսանելի դարձնելու համար անհրաժեշտ է պարզել ուսումնասիրության և վերլուծության թեմայի սահմանադրական արժեքայնությունը:
3. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանը ինքնիշխան, ժողովրդավարական, **սոցիալական**, իրավական պետություն է:
4. **ՀՀ Սահմանադրության** 11-րդ հոդվածը սահմանում է Հայաստանում տնտեսական կարգի հիմնական կանոնները: Տվյալ հոդվածի համաձայն՝ Հայաստանի տնտեսական կարգի հիմքը **սոցիալական շուկայական տնտեսությունն** է, որը հիմնված է **մասնավոր սեփականության**, **տնտեսական գործունեության ազատության**, **ազատ տնտեսական մրցակցության վրա** և **պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը**:
5. Սահմանադրության անփոփոխելի հոդվածով Հայաստանը ճանաչվում է որպես սոցիալական-իրավական պետություն: Սոցիալական պետության բնորոշ հատկանիշը **սոցիալական շուկայական տնտեսությունն է ու դրա բնականոն գործունեությունը**: Սոցիալական շուկայական տնտեսության վրա խարսխված նման պետությունում ելակետային է **ազատ անձի հայեցակարգը**, ով **ինքնուրույն է** և պատասխանատու իր գործողությունների համար:
6. Վերոգրյալ սահմանադրական նորմից նաև բխում է, որ իրավական որոշակիությունից և հստակությունից ելնելով սոցիալական, տնտեսական հիմնական իրավունքները, այդ թվում տնտեսական գործունեության ազատությունը և պետության օրինական նպատակները պետք է միմյանցից հստակ տարանջատվեն, քանի որ դրանք առաջացնում են լիովին տարբեր իրավական հետևանքներ:
7. Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է, որը ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածում ամրագրված այլ դրույթների հետ մեկտեղ, հանդես է գալիս որպես ազատական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման սուբյեկտիվ նախադրյալ: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն

երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այսինքն՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:

8. Ձեռնարկատիրական գործունեությունը հանդես է գալիս որպես ձեռնարկատեր գրանցված անձի ինքնուրույն, իր ռիսկով ու օրենքով սահմանված կարգով իրականացվող գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:
9. Ձեռնարկատիրական գործունեությունը կարող է արտահայտվել ձեռնարկություններ ստեղծելով, վերակազմակերպելով, քաղաքացիաիրավական պայմանագրեր կնքելով, ստացած արդյունքն ազատորեն տնօրինելով, շահույթ ստանալով:
10. Տնտեսական ազատության սկզբունքը պետության վրա դնում է որոշակի պարտականություններ ուղղված դրա երաշխավորմանը: Շուկայական տնտեսությունում ապրանքների և ծառայությունների գները որոշվում **<u>են ազատ արտադրողների առաջարկի և սպառողների պահանջարկի հիման վրա</u>**: Տնտեսական օրինաչափությունները պահանջում են, որ սեփականատերերը և ձեռնարկատերերը **<u>լինեն ազատ և ինքնուրույն</u>**, **առանց պետական միջամտության որոշեն, թե ինչ են արտադրելու, ինչ քանակով և ինչ գներով են իրացնելու շուկայում:**
11. Շուկայական տնտեսության մեջ կարևոր է պետության դերը, որը պահպանելով շուկայական տնտեսության հիմունքները, ստանձնում է տնտեսության կարգավորման գործառույթը: Պետությունը սահմանում է տնտեսական կյանքը կարգավորող իրավական նորմեր՝ մի կողմից ամրագրելով և երաշխավորելով շուկայական տնտեսության համակարգի հիմունքները, իսկ մյուս կողմից որոշելով այսպես կոչված «խաղի կանոնները» տնտեսվարող առանձին սուբյեկտների համար: Ինչպես նշվեց վերոգրյալում, պետության կարևոր պարտականությունն է նախադրյալներ ստեղծել, ձևավորել անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ շուկայական տնտեսական հարաբերությունները պայմանավորող սուբյեկտիվ տնտեսական օրենքների գործողությունը երաշխավորելու համար:
12. Վերոգրյալում թվարկված սկզբունքների հետևողական իրացումն անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ կարող է ապահովել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ զարգացող տնտեսական համակարգ ձևավորելու համար: Միաժամանակ պետությունը պետք է ապահովի հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը՝ դրանց համար անհրաժեշտ օրենսդրական և ենթակառուցվածքային նախադրյալների ստեղծումով և այդ օրենսդրության սահմանված կարգով իր վարքագծի ցուցաբերումով:
13. Այդպիսի գործելակերպից բխում է սահմանափակումների իրավական կարգավորման հստակ, կանխատեսելի, իրավական որոշակիության հիմնարար

սկզբունքի, խախտումների ու կամայականությունների դեմ բավարար երաշխիքների հիման վրա գործող իրավական կառուցակարգերի ստեղծում, պետական իշխանության ինստիտուտների գործառույթների ու լիազորությունների ներդաշնակում, այդ իրավահարաբերություններում պետության դերի օրենսդրական մանրակրկիտ կանոնակարգում և այլն (տես՝ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ 2010 թ.):

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

14. Սույն ուսումնասիրության նախաբանում առկա սկզբունք-նպատակների իրագործման նպատակով անհրաժեշտ է կայուն օրենսդրական դաշտ, որը կկարողանա սահմանել տնտեսական գործունեության ազատության իրականացման երաշխիքներ, իրավահարաբերության մասնակիցների իրավունքների պաշտպանության հուսալի գործիքներ ոչ միայն այլ տնտեսվարող սուբյեկտների ներգործությունից, այլ նաև պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործողություններից:
15. Քիչ չեն դեպքերը, երբ տնտեսական գործունեության ազատությունը սահմանափակվում է իշխանական լիազորություններ ունեցող պետական կառույցների վարքագծից, որոնք թեկուզև ուղղված են որոշակի նպատակի իրականացմանը, սակայն իրենց բովանդակությամբ միջամտում, ընդհուպ սահմանափակում են տնտեսվարող սուբյեկտների իրավունքները:
16. Օրենքը, որն ընդունվել է 06.11.2000թ, նպատակ ունի պաշտպանել և խրախուսել տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել տնտեսության զարգացմանը:
17. Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ Օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:
18. Վերոգրյալ սահմանումից բխում է, որ Օրենքի նպատակի իրականացման համար Օրենքում օրենսդիրը սահմանել է այն կառույցների կամ անձանց շրջանակները, որոնց նկատմամբ տարածվում է Օրենքը: Ի թիվս տնտեսվարող սուբյեկտների, Օրենքը նաև տարածվում է պետական մարմինների, ինչպես նաև դրանց

պաշտոնատար անձանց գործողության կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են տնտեսական մրցակցության անբարենպաստ իրադրության:

19. Վերոգրյալ սահմանումների կանոնակարգման համար Օրենքի 19-րդ հոդվածում սահմանվել է Հանձնաժողովի կոնկրետ գործառույթները պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հետ իրավահարաբերությունում Հանձնաժողովի լիազորությունները:
20. Այդպիսի լիազորություններ են.
    20.1. տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքի խախտումների դադարեցման կամ դրանց հետևանքների վերացման, սկզբնական վիճակի վերականգնման, Օրենքին հակասող պայմանագրերի փոփոխման կամ լուծման, այլ տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանագրերի կնքման վերաբերյալ որոշումներ կայացնել,
    20.2. պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված ակտերի, այլ փաստաթղթերի (կազմակերպված մրցույթների վերաբերյալ որոշումների, արձանագրությունների և այլն) տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը հակասելու, կնքվող համաձայնությունների, պետական օժանդակությունների, ինչպես նաև համակենտրոնացումների մասին եզրակացություններ տալ,
    20.3. Համակենտրոնացումը կամ պետական օժանդակությունը, պետական մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունները կամ վարքագիծը կասեցնելու, լուծարելու (լուծելու, դադարեցնելու) ակտերը ոչ իրավաչափ, ուժը կորցրած ճանաչել,.
    20.4. պետական մարմինների պաշտոնատար անձանց Օրենքի խախտման համար պատասխանատվության ենթարկել,
    20.5. պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց՝ սույն օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ զգուշացումներ տալ.
    20.6. պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից սույն օրենքի դրույթների կիրառման վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցներ, այլ փաստաթղթեր հաստատել,
    20.7. դիմելու դատարան պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ընդունած ակտերը, տնտեսվարող սուբյեկտների՝ օրենքի խախտմամբ կնքված պայմանագրերը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու, ինչպես նաև այդ պայմանագրերի փոփոխման կամ լուծման պահանջով,

20.8. դիմելու ՀՀ կառավարությանը՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց՝ սույն օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ:

21. Ավելին, Օրենսդիրը կարևորելով վերոգրյալ հարաբերությունը, ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել է քրեական պատիժ հակամրցակցային գործունեության համար:

22. ՀՀ Քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ «ապօրինի մենաշնորհային գներն արհեստական բարձրացնելը կամ իջեցնելը, պահպանելը, ինչպես նաև մրցակցությունը սահմանափակելը նախնական համաձայնությամբ կամ համաձայնեցված գործողությունների միջոցով, որն ուղղված է շուկան տարածքային սկզբունքով բաժանելուն, տնտեսավարող սուբյեկտներին շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն, տնտեսավարող այլ սուբյեկտներին շուկայից դուրս մղելուն, խտրական գներ սահմանելուն կամ պահպանելուն՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: 2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝ 1) բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով, 2) ուրիշի գույքը վնասելով կամ ոչնչացնելով կամ ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով, 3) պաշտոնեական դիրքն օգտագործելով, 4) կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»

23. Սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, վերոգրյալ իրավական նորմը գրեթե չի կիրառվում և այդպես էլ մնացել է որպես իրավական սահմանում:

24. ՀՀ Հանձնաժողովի նախագահի կողմից 04.04.2016 թվականին տրված ԱԾ-1137 գրավոր տեղեկատվության համաձայն՝Հանձնաժողովի ստեղծման պահից մինչև այժմ Հանձնաժողովի կողմից պետական մարմինների և /կամ/ դրանց պաշտոնատար անձանց Օրենքի խախտման համար պատասխանատվության ենթարկելու, խախտումների դադարեցման կամ դրանց հետևանքների վերացման, զգուշացում տալու վերաբերյալ որոշումներ չեն ընդունվել:

25. Ըստ տրամադրված տեղեկատվության Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.3-րդ հոդվածում առկա պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից որևէ որոշում չի ընդունվել: Որպես անգործության հետևանք, հղում են կատարել համապատասխան օրենսդրական մեխանիզմների բացակայությունը, այնինչ Հանձնաժողովը գործադիր իշխանության մաս է և Օրենքի հիմնական փոփոխությունը իրականացվել է հենց հանձնաժողովի առաջարկությամբ և

համապատասխան կամքի առկայության դեպքում հնարավոր էր այդ մեխանիզմների առկայության համար աշխատանք տանել:

26. Հանձնաժողովը, համաձայն այդ տեղեկատվության, պետական օժանդակությունը, պետական մարմինների և/կամ տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունները կամ վարքագիծը կասեցնելու, լուծարելու (լուծելու, դադարեցնելու), ակտերը ոչ իրավաչափ, ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշում չի ընդունել:
27. Պետական մարմինների և պաշտոնատար անձանց վարքագծի նկատմամբ Օրենքի ներգործությունը իրական կյանքում քիչ է հանդիպում: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հանձնաժողովի հիմնական նպատակը և գործունեությունը տնտեսվարող սուբյեկտների անմիջական **վարքագիծն** է, որի հիման վրա էլ իրականացվում է վարչարարությունը:
28. Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատությունը շատ դեպքերում սահմանափակվում է: Սահմանափակումները հիմնականում իրականացվում են իրավական նորմերում առկա սահմանումների լայն մեկնաբանությամբ: Վարչարարության իրականացման ժամանակ սույն ուսումնասիրության նախաբանում մատնանշված հիմնարար սկզբունքները հազվադեպ են կիրառվում: Անհատի և ընդհանուրի բախվող լեգիտիմ շահերի միջև ողջամիտ փոխհավասարակշռում սահմանելու ինստիտուտը, կամ դրա այնպիսի ածանցյալներ, ինչպիսին են միջամտող միջոցների համաչափության, վերաբերելիության ու նպատակահարմարության, նպատակի ու միջոցի միջև ռացիոնալ կապի անհրաժեշտության սկզբունքները ընդհանրապես չեն կիրառվում: Արդյունքում, Հանձնաժողովի որոշումները, և պրակտիկան ընդհանուր առմամբ, աչքի են ընկնում չափազանց պոզիտիվիստական, լեգիստական մոտեցումներով, որում կիրառվում է օրենքի տառը՝ անտեսելով իրավունքի բովանդակությունը:
29. Օրինակ կարելի է մեջբերել «Հիքսոս» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Հանձնաժողովի՝ վարչական ակտերը վերցնելու պահանջի մասին (ՎԴ/1925/05/14 դատական գործը): Տվյալ գործով տնտեսվարող սուբյեկտը պատասխանատվության է ենթարկվել գովազդում հետևյալ արտահայտությունը նշելու համար. *«Ռիզո Սկոտտի («Riso Scotti») բրինձի …իտալական որակը հաստատված է լավագույն շեֆ-խոհարարների կողմից»*:
30. Համաձայն տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ «Տվյալ դեպքում Ընկերությունը իր կողմից ներմուծվող ապրանքի գովազդում նշել է. *«Ընկերությունը գովազդում «օգտագործելով լավագույն շեֆ-խոհարարներ» արտահայտությունը, չի ներկայացրել որևէ ապացույց շեֆ-խոհարարների լավագույնը լինելու վերաբերյալ: Ապրանքի իտալական որակը լավագույն շեֆ-խոհարարների կողմից հաստատված լինելու մասին հիշատակումը սպառողի համար կարող է կողմնորոշիչ նշանակություն ունենալ…»:*

31. Վերոգրյալի դեպքում հանձնաժողովը սահմանափակել է անձի ազատությունը, միջամտել է անձի սեփականության իրավունքի նկատմամբ և սեփականազրկել տնտեսվարող սուբյեկտին:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

32. Վարչական մարմիններն, այդ թվում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, պետք է իրենց հայեցողական լիազորությունները գործադրեն ոչ թե կամայականորեն, այլ որոշակի իրավիճակներին արձագանքեն օրենքով իրենց վերապահված լիազորություններով, սակայն ոչ չափից ավելի կոշտ և կտրուկ միջոցներով:
33. Իրավիճակին իրավաչափ միջոցներով արձագանքելու արդարացիության համարժեքությունը, պարտադրում է վարչական մարմնին նվազագույնի հասցնել միջամտությունը մասնավոր անձանց իրավունքներին բոլոր այն դեպքերում, երբ դա փաստացի հնարավոր է:
34. ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:
35. Վարչարարության հիմունքների մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:
36. Համաչափությունը սահմանադրական համանուն սկզբունքի որոշակիացումն է վարչական իրավունքի բնագավառում: Սահմանադիրը համաչափության սկզբունքով, որն իրավական պետության բաղադրիչներից է (Սահմանադրության 1-ին հոդված) սահմանափակում է, մասնավորապես, օրենսդրի հայեցողական լիազորությունը՝ սահմանափակելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները: Այսպիսով, այս սկզբունքի հիմնական գործառույթը հանրային իշխանության միջամտությունների սահմանափակումն է՝ արդարության իրավաբանորեն հավաստագրվող չափանիշների միջոցով:
37. Համաչափության սկզբունքը բաղկացած է մի շարք տարրերից, որոնցից առաջինը վերաբերվում է վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինների կողմից

հետապնդվող **նպատակին**, իսկ մյուս երեք տարրերը՝ այդ **նպատակին հասնելու միջոցներին**:

38. Օրենքով կարգավորվող իրավահարաբերությունում, ինչպես նշվեց վերոգրյալում, նպատակները սահմանված են օրենքի 1-ին հոդվածում, դրանք են.

    1) պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը.
    2) ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր.
    3) նաստել ձեռնարկատիրության զարգացմանը.
    4) սպառողների շահերի պաշտպանությունը:

39. Վերոգրյալ նպատակին հասնելու միջոցների մեծամասնությունը սահմանված են Օրենքի 19-րդ հոդվածում, որոնք իրենցից ներկայացնում են միջամտություն որևէ անձի լիազորությանը կամ ազատությանը, որպեսզի իրագործվի նպատակը: Օրենքի 19-րդ հոդվածում առկա միջոցների վերաբերյալ արդեն իսկ խոսվել է վերոգրյալ գլխում և նշվել է այն միջոցները, որոնք գրեթե չեն օգտագործվում, այնինչ օգտագործվում է այնպիսի միջոցներ, որոնք որոշ դեպքերում վերածվում են հակառակ ռեակցիայի: Օրինակ՝ մեկ միջոցի անընդհատ և անհամաչափ կիրառությունը բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման նպատակով վեր է ածվում ազատ տնտեսական մրցակցության խրախուսման և պաշտպանության նպատակի խաթարմանը, կամ սպառողների շահերի պաշտպանության միջոցի անհամաչափ կիրառությունը խաթարում է ձեռնարկատիրության զարգացման նպատակի իրագործմանը:
40. Հանձնաժողովի կողմից որևէ միջոցի կիրառության դեպքում անհրաժեշտ է այն համապատասխանեցնել նպատակի հետ: Համաչափության սկզբունքը պահանջում է, որպեսզի վարչական մարմիններն այդ միջոցները գործադրելիս հետապնդեն միայն լեգիտիմ նպատակներ, այսինքն՝ նպատակներ, որոնք ամրագրված են կամ բխում են Սահմանադրությունից, միջազգային պայմանագրերից և օրենքներից:
41. Ինչպես նշվեց Հանձնաժողովի նպատակները որոշել է Օրենսդիրը, որը որոշակիացնում է սահմանադրական նպատակները օրենքներում: Համաչափության սկզբունքի այս տարրը այդ առումով ոչ այլ ինչ է, քան օրինականության սկզբունքի արտահայտություն:
42. Հանձնաժողովը պետք է նաև առաջնորդվի համաչափության կարևորագույն տարրերից մեկով՝ պիտանիությամբ: Պիտանիությունը օրենքով հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցների ընտրության առաջին, ռազմավարական չափանիշն է, այն պայմանավորում է այդ նպատակին հասնելու համար փաստացի հնարավոր միջոցներից անհրաժեշտաբար ընտրել հենց այն, որով հնարավոր է

հասնել նպատակին, որը ռացիոնալ է և միջոցը պետք է հնարավոր դարձնի նպատակը:

43. Հանձնաժողովի կողմից ընտրված միջոցի համաչափության անհրաժեշտությունը նաև նշանակում է, որ օրենքով հետապնդվող նպատակը չի կարող իրացվել հավասարապես պիտանի, ավելի մեղմ միջոցներից և ոչ մեկով, բացի այն միջոցից, որն ընտրել է վարչական մարմինը:
44. Վերոգրյալ սկզբունքի կիրառությունը ավելի առարկայական դարձնելու համար վերլուծենք Հանձնաժողովի Էմորշին ՍՊԸ-ի նկատմամբ իրականացված գործողությունների իրավական բովանդակությունը: Հանձնաժողովը սահմանված ժամկետում պահանջել է տեղեկատվություն սուբյեկտի փայաբաժնի վերաբերյալ: Սուբյեկտը սահմանված ժամկետում չի կատարել պահանջը և ենթարկվել է պատասխանատվության՝ սեփականության իրավունքի նկատմամբ միջամտության ձևով:
45. Արդյո՞ք առկա է համաչափության անհրաժեշտության տարրը: Ինչպես նշվեց անհրաժեշտությունը նշանակում է, որ վարչական մարմինը պարտավոր է ընտրել այնպիսի միջոց, որը ամենամեղմն է և պիտանի տվյալ նպատակին հասնելու համար:
46. Սույն դեպքում, հանձնաժողովը կարող էր օգտվել Օրենսդրի կողմից իրեն տրված այլ միջոցից, այն է՝ Վարչարարության հիմունքների մասին օրենքի 3-րդ գլխով սահմանված **փոխօգնության** իրավական կարգավորումներից և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:
47. Այնինչ Հանձնաժողովը այդ տեղեկատվությունը պահանջել է խիստ սահմանափակ ժամկետում տնտեսվարող սուբյեկտից և չկատարելու արդյունքում ենթարկել է պատասխանատվության: Միանշանակ կարող ենք փաստել, որ հանձնաժողովը չի ընտրել ամենամեղմ միջոցը նպատակին հասնելու համար:
48. Հետևաբար, եթե կա նույնքան արդյունավետ, սակայն մասնավոր անձի իրավունքներին ավելի նվազ միջամտող, նրան ավելի քիչ անհանգստություն պատճառող միջոց, ապա վարչական մարմինը պարտավոր է նախընտրել այդ միջոցը: Այստեղ գործ ունենք հայեցողության նվազման, զրոյացման հետ: Հայեցողություն ունենալով հանդերձ հանձնաժողովը պարտավոր է գործել մասնավոր անձին առավել նվազ վնաս հասցնող, առավել խնայող եղանակով, եթե նման կերպով նույնիսկ արդյունավետությամբ կարող է հասնել լեգիտիմ նպատակին: Եվ միայն այն դեպքում, երբ բոլոր այն պիտանի միջոցներից, որոնք ավելի մեղմ են միջամտում անձի ազատությանը, չի ապահովվի օրենքով հետապնդվող նպատակի իրացումը, վարչական մարմինը կարող է ընտրել ավելի խիստ միջոցը, որը և կլինի անհրաժեշտ:

49. Հանձնաժողովի կողմից մի շարք պիտանի միջոցներից նախընտրած միջոցը պետք է լինի անհրաժեշտ և համարժեք լեգիտիմ նպատակին: Այդ սահմանման նպատակը Սահմանադրության արժեհամակարգի՝ հիմնական իրավունքների գերակայության երաշխավորումն է:
50. Ինչպես նշվեց վերոգրյալում, Օրենքի 19-րդ հոդվածում սահմանված են մի շարք պիտանի միջոցներ, որոնք ուղղված են Օրենքի 1-ին հոդվածում սահմանված նպատակին հասնելու համար:
51. Հանձնաժողովը իր գործունեության ընթացքում, յուրաքանչյուր գործողություն իրականացնելուց առաջ պարտավոր է հետազոտել փաստերը և եզրահանգել, արդյո՞ք այլ միջոցները ավելի մեղմ կարող են լինել, քան ընտրած միջոցը: Ընտրված միջոցը համարժեք է նպատակին թե ոչ, արդյո՞ք այն պիտանի է և չափավոր, արդյո՞ք այդ նպատակին հասնելու համար հնարավոր չէ իրականացնել այլ, նվազ միջամտող միջոց, որը հնարավորություն կտա շրջանցել մասնավոր անձանց հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելու մտադրությունից:
52. Հանձնաժողովի կողմից պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց նկատմամբ որոշակի գործողություններ իրականացնելու միջոցը թողնվել է բարձիթողի և այդ միջոցը գրեթե չի օգտագործվում (օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ), այնինչ օգտագործվում է մասնավոր անձանց իրավունքները և ազատությունները սահմանափակող, տնտեսական գործունեության ազատությունը սահմանափակող միջոցներ, որոնք եզրափակվում են հիմնականում տնտեսվարող անձանց սեփականազրկմամբ:
53. Օրենքի 36-րդ հոդվածում սահմանված են այն պատասխանատվության միջոցները, որոնք կիրառվում են հիմնական իրավունքները և ազատությունները կրող անձանց նկատմամբ: Պատասխանատվության միջոցները ի համեմատություն վարչական իրավախախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցների հիմնականում իրենց չափով մեծ են մի քանի անգամ և իրենց բնույթով և խստությամբ համարժեք են քրեական բնույթի մեղադրանքի, թեև ձևական առումով դրանք դասակարգված են որպես տույժ:
54. Օրինակ՝ հակամրցակցային համաձայնության և գերիշխող դիրքի չարաշահման համար սահմանված է հինգ միլիոնից մինչև երկու հարյուր միլիոն ՀՀ դրամ գումար: Տեղեկատվություն չտրամադրելու համար սահմանված է մինչև հինգ միլիոն ՀՀ դրամ տուգանք:
55. ՀՀ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների կիրառման չափանիշների որոշման վերաբերյալ 31.05.2013թ կազմվել է № 133-Ա ուղեցույցը, որն իր բովանդակությամբ սահմանում է այն սկզբունքները, որի հիման վրա անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության: Ուղեցույցը իրենից ներկայացնում է հիմնական սահմանումներ՝ մեղմացնող և խստացնող փաստերի

վերաբերյալ և չի պարունակում կոնկրետ չափորոշիչներ, այդ իսկ պատճառով Հանձնաժողովի կողմից կայացված որոշումների մեծամասնությունը հղում չի կատարում այդ ուղեցույցին:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

56. ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝ 1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: 2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: 3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:
57. Հայաստանում ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և բազմաթիվ այլ օրենքներով և այլ իրավական ակտերով: Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքը Հայաստանում դասվում է քաղաքացու սահմանադրական իրավունքների թվին, իրենից ներկայացնում է քաղաքացուն իր նպատակներին հասնելու համար վերապահված և օրենքով ու այլ նորմատիվ իրավական ակտերով ապահովված հնարավոր վարքագծի ծավալը:
58. Այսպիսով, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքն իրավազոր անձին անսահման ազատություն չի վերապահում: Այդ վարքագիծը կարող է դրսևորվել միայն նորմատիվ իրավական ակտերով սահմանված շրջանակներում, որոնք պարունակում են ինչպես վարքագծի պոզիտիվ կանոններ, այնպես էլ այդ բնագավառում կիրառվող արգելքներ:
59. Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում անձինք սահմանափակված են տնտեսական հարաբերությունով՝ ազատ մրցակցությամբ: Մրցակցությունը լայն իմաստով տարբեր անձանց միջև մրցություն է որոշակի նպատակի հասնելու համար, ձեռնարկատիրական գործունեության մրցակցությունը տնտեսվարող անձանց միջև մրցություն է ապրանքների արտադրության և իրացման լավագույն պայմանների ու հնարավորինս առավելագույն շահույթ ստանալու համար:
60. Մրցակցության լեգալ բնորոշումը տրված է Օրենքի 4-րդ հոդվածում, համաձայն որի՝ **տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն**՝ ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում

են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները:

61. Պետությունը պետք է ձգտի ապահովել ինչպես մրցակցության գոյությունը, այնպես էլ դրա որակական չափանիշները (բարեխղճություն, արդարություն, ազնվություն): Այս ամենը կազմում է մրցակցության բնագավառում իրավակարգի հիմքը: Մրցակցության ֆենոմենն արտահայտվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների մասնավոր և պետության հանրային շահերի համակցության մեջ:
62. Շուկայում ապրանքների, ծառայությունների արտադրության և իրացման բնագավառում հնարավորինս ձեռնտու պայմանների, ինչպես նաև սպառողի և վերջինիս պահանջմունքները բավարարելու համար պայքարում դրսևորվում է մասնավոր հանրային շահը, իսկ տնտեսվարողների մենաշնորհային կամ գերիշխող դիրքի սահմանափակումների և զսպման մեխանիզմների կիրառմամբ դրսևորվում է պետության հանրային շահը:
63. Այս մոտեցումը սկզբունքային է և հիմք է ծառայում շուկայում մրցակցության իրավական կարգավորման համար: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները:
64. Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ 2. Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝

    1) տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես որպես իրացնող կամ ձեռք բերող չի հանդիպում էական մրցակցության և (կամ) իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով՝ հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսվարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն, կամ

    2) որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ

    3) ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք

որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ

4) ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

65. Ինչպես տեսնում ենք, Օրենսդիրը գերիշխող դիրք ունեցողի կարգավիճակ շնորհելու չափանիշներ է համարում 4 պայմանները, որից որևէ մեկը բավարարելու դեպքում անձը համարվում է գերիշխող դիրք զբաղեցնող և օրենքի ուժով պարտավոր է սահմանված կարգով որոշակի գործողություններ կատարել: Վերոգրյալ պայմանների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ կոնկրետ փաստական հանգամանքներում դժվար կլինի որոշել պայմանների առկայությունը կամ բացակայությունը, որից ենթադրվում է բարդ, համակողմանի, ժամանակատար աշխատանք:
66. Օրենքի 2-րդ հոդվածում բացահայտվում է ապրանքային շուկա հասկացողությունը, որի համաձայն՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝ որոշակի տարածքում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան ապրանքի տարածքում ձեռքբերման տնտեսական հնարավորություններով և նպատակահարմարությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով:
67. Վերոգրյալ հոդվածը լայն լիազորություն և հայեցողություն է սահմանել հանձնաժողովի համար ընտրելու, թե կոնկրետ փաստական հանգամանքների դեպքում որ տարածքը համարել ապրանքային շուկա և տվյալ ելակետային տվյալի հիման վրա իրականացնել վարչարարություն:
68. Սակայն ժամանակակից աշխարհի զարգացման համընթաց գնահատման չափանիշները փոխվում են և այն դեպքերում, երբ նախկինում կոնկրետ օրենքով սահմանված չափանիշի հիման վրա հնարավոր է սահմանել կոնկրետ իրավահարաբերություն, այժմ գնալով ավելի է դժվարանում, ընդհուպ մինչև անհնարին դարձնում նպատակների իրականացման համար ընտրված միջոցները:
69. Գերիշխող դիրքի չարաշահման հարցեր ուսումնասիրելիս պետական մարմինները և իրավաբան-հետազոտողները առնչվում են տնտեսագիտական այնպիսի կատեգորիաների, ինչպիսիք են՝ շուկայի ծավալը, շուկայի մրցակցային վիճակի գնահատման մեթոդիկան, շուկայական համակենտրոնացվածության մակարդակը, շուկայական իշխանության գնահատման գործակիցները և այլն, առանց

պարզաբանման՝ հնարավոր չէ իրավական եզրակացություններ անել և մեխանիզմներ մշակել:

70. Որոշակի դեպքերում, երբ ապրանքը կամ ծառայությունը նախկինում հնարավոր էր գնորդներից գնել ապրանքային շուկայում, այժմ այն դարձել է հնարավոր նաև համացանցի միջոցով: Արդեն իսկ առկա են այնպիսի կազմակերպություններ, որոնք հանդիսանում են միջնորդներ Գնորդ-ոչ ռեզիդենտ վաճառող հարաբերություններում, այսինքն՝ ապրանքային շուկայի մասնակից կարող է լինել ցանկացած իրավաբանական անձը ամբողջ աշխարհում:
71. Ավելի բարդ է բարձր տեխնոլոգիաների ոլորտում, որտեղ հիմնական Գնորդ-Վաճառող իրավահարաբերությունը ծագում է համացանցի միջոցով և անհնարին է դարձնում վերոգրյալ չափանիշների կիրառությունը՝ հրամայական դարձնելով օրենսդրության համապատասխան փոփոխությունը:
72. Օրենքն արգելքներ է պարունակում այնպիսի գործողությունների կատարման նկատմամբ, որոնք հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը և այդ արգելքները տարածվում են ոչ միայն այն տնտեսվարող սուբյեկտների վրա, այլև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակման, կանխման, արգելման կամ անբարեխիղճ մրցակցության գործողության:
73. Վերոգրյալ միջոցի առկայության, ինչպես նաև այդ միջոցի անկիրառելիության մասին վերոգրյալ բաժիններում խոսվել է: Սույն դեպքում միայն արձանագրենք, որ թյուր է այն համոզմունքը, որի համաձայն տնտեսական գործունեության ազատության սահմանափակումը իրավական պետությունում միայն իրականացվում է մասնավոր սուբյեկտների կողմից և պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք անմասն են այդպիսի հարաբերություններում:

4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ, ՀՀ-ԵՄ ՓՈՐՁԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ-ում մրցակցային օրենսդրության խախտումների վարույթների ընթացքում պաշտպանության կառուցակարգերի իրավական և պրակտիկ բացերը.

Աքսիոմատիկ ճշմարտություն է, որ վարույթի ընթացքում արդյունավետ պաշտպանության համար, նախ և առաջ պետք է տեղեկացված լինել, թե ինչ հիմքերով է այդ վարույթը հարուցվել: Միայն դրանից հետո է պարզ դառնում, թե ինչի դեմ է պետք պաշտպանվել, վարույթը ինչի վերաբերյալ է ընթանալու: Հաջորդ կարևոր խնդիրը պայմանավորված է մրցակային օրենսդրության առանձնահատկություններով: Մասնավորապես, մրցակցային օրենսդրության մի շարք խախտումներ հիմնավորելու

համար, նախ և առաջ պետք է բացահայտել ապրանքային շուկան (հակամրցակցային համաձայնություններ, գերիշխող դիրքի չարաշահումներ), այնուհետև որոշել այդ շուկայում որոշակի կարգավիճակի առկայությունը (օրինակ՝ հիմնավորելու համար, որ առկա է գերիշխող դիրք) ապա նաև անդրադառնալ խախտման առկայությանը կամ բացակայությանը (գերիշխող դիրքի չարաշահում, հակամրցակցային հորիզոնական համաձայնություն և այլն/:

ՀՀ-ում վարչական մարմնի նախաձեռնությամբ վարույթ հարուցելիս դրա հիմքերի մասին տեղեկացման մասով առկա են հետևյալ կարգավորումները:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«*Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝

«*Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝*

1) ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրավունք.

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք»:

ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

«*Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար <u>անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր</u>*»:

Վերոգրյալ սահմանադրական դրույթներից բխում է, որ վարչարարությունը պետք է լինի արդարացի և անաչառ, ներկայացված մեղադրանքի հիմքերը պետք է պարզ լինեն մեղադրվողի համար, օրենքներով պետք է սահմանվեն անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր հիմնական իրավունքների իրականացման (օրինակ՝ <u>պաշտպանության իրավունքի</u>) իրականացման համար:

Օրենսդրական մակարդակում **<u>գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման հիմքով</u>** հարուցվող վարչական վարույթի համար սահմանված են <u>պաշտպանության իրավունքը ապահովող հետևյալ կառուցակարգերը</u>՝

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ.

Վարչարարության հիմունքների մասին օրենք 34-րդ հոդվածի համաձայն՝

«*Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ <u>վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը</u>*»:

Նույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված է վարչական մարմնի պարտականությունը վարույթը հարուցելու դեպքում այդ մասին վարույթի մասնակիցներին ծանուցելու մասին։

Այսպիսով, ընդհանուր վարչարարական սկզբունքը այն է, որ վարույթը սեփական նախաձեռնությամբ սկսելը պետք է պայմանավորված լինի օրենքից բխող անհրաժեշտությամբ կամ օրենքով վարչական մարմնին պետք է վերապահված լինի հայեցողական լիազորություն։ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի առարկայից բխում է, որ Հանձնաժողովին տրված է հայեցողական լիազորություն մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումները հայտնաբերելու և դրանք վերացնելու ուղղությամբ։

Հայեցողական լիազորությունների վերապահումը, սակայն, չի նշանակում, որ Հանձնաժողովը ցանկացած պահի կարող է վարույթ հարուցել վերացական փաստական և իրավական հիմքերով։ Փաստական հիմքերի առկայությամբ պայմանավորված վարույթը պետք է հարուցվի օրենքի կոնկրետ նորմի ենթադրյալ խախտման հիմքով։

- ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ.

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անձանց նկատմամբ վարույթ հարուցելիս չի նախատեսված այնպիսի կառուցակարգ, որը պաշտպանության իրավունքը ապահովելու հնարավորություն կտար։ Այսինքն, խնդիրը թողնվել է Վարչարարության հիմունքների մասին օրենքին։

Այնուամենայնիվ, մրցակցության օրենսդրության առանձնահատկություններով պայմանավորված ակնհայտ է, որ պաշտպանության արդյունավետ միջոցի առկայությունը կախված է այնպիսի հասկացությունների բացահայտումից, ինչպիսինն են «ապրանքային շուկան», «գերիշխող դիրքը» և այլն։ Այն հանգամանքը, որ Օրենքով կարգավորված չէ, թե դրանք ինչ ընթացակարգով են որոշվում (պրակտիկայում թե՛ «ապրանքային շուկան», թե՛ գերիշխող դիրքի առկայությունը, թե գերիշխող դիրքի չարաշահումը պարզաբանվում են մեկ վարույթի շրջանակներում) առաջ է բերում մի շարք խնդիրներ։

Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝

«*Արգելվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհ կամ **գերիշխող դիրքի** (այսուհետ՝ գերիշխող դիրք) չարաշահումը*»։

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«*Տնտեսվարող սուբյեկտն **ապրանքային շուկայում** համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե* {…}»։

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

«***ապրանքային շուկա**՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝*

Հանձնաժողով) որոշմամբ սահմանված՝ որոշակի տարածքում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտ, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման տնտեսական հնարավորություններով և նպատակահարմարությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով»:

Արդեն նշեցինք, որ պրակտիկայում ապրանքային շուկայի որոշումը, դրանում գերիշխող դիրքի առկայությունը և դրա չարաշահումը որոշվում են մեկ վարույթի ընթացքում[1]: Այս պրակտիկան ինքնին խնդիր չէր առաջացնի, քանի որ պարզ է, որ գործ ունենք տնտեսագիտական հասկացությունների հետ, հնարավոր չէ սպառիչ սահմանել բոլոր շուկաները, տնտեսվարողը ինքը ամենալավն է հասկանում ապրանքային շուկան: Խնդիրներ առաջանում են *պաշտպանության կառուցակարգերի բացակայության պատճառով*:

Պրակտիկայում, կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու որոշման եզրափակիչ հատվածում նշվում է. «օրենքի հնարավոր խախտման հիմքով հարուցել վարույթ» նախադասությունը: Պատճառաբանական մասերում տրվում են որոշակի հեղհեղուկ պարզաբանումներ, մասնավորապես, «բարձրացրել է ծառայությունների գները», «օրենքով արգելվում է գերիշխող դիրքի չարաշահումը»: Ապրանքային շուկան, սակայն, չի սահմանվում հստակ: Տնտեսվարողի համար պարզ չի դառնում, թե հստակ ո՞ր ապրանքային շուկայի մասին է խոսքը

[1] Թիվ ՎԴ/0115/05/12 վարչական գործի շրջանակներում ՀՀ վարչական դատարանը արտահայտել էր հետևյալ դիրքորոշումը. «Օրենքի 6-րդ հոդվածի դրույթների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից դրսևորած վարքագիծը (գործողությունը կամ անգործությունը)՝ որպես մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահում որակելու **առաջին նախապայման է հանդիսանում համապատասխան ապրանքային շուկայում** տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհի դիրքի առկայությունը: «Մենաշնորհի դիրք» հասկացությունը նախևառաջ տվյալ ապրանքային շուկայում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի փաստացի կարգավիճակն է, որն էլ **իրավական ձևակերպում է ստանում, ամրագրվում է Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ**»:
Նույն գործով, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, չհամաձայնելով այս դիրքորոշմանը, նշել է. «Վերաքննիչ դատարանի գնահատմամբ տնտեսվարողի՝ մենաշնորհի դիրք ունենալու կարգավիճակի **Հանձնաժողովի որոշմամբ ամրագրելու օրենսդրական պահանջը դեռևս չի ենթադրում, որ տնտեսվարողի տնտեսական ազատությունը բացարձակ էր այդ որոշմանը նախորդող ժամանակաշրջանի համար**: Մենաշնորհի դիրքի չափանիշները սահմանված են օրենքով, իսկ օրենքով սահմանված չափանիշներով մենաշնորհի դիրք ունենալու հարցը որոշելու կարգը և չափանիշները սահմանելու հարցի լուծումն օրենսդիրը վերապահել է հանձնաժողովին, այսինքն Հանձնաժողովն իր իսկ կողմից սահմանված չափանիշներով որոշում է, թե տնտեսվարողն օրենքի իմաստով ունի մենաշնորհի դիրք, թե ոչ: Նշված ուսումնասիրությունները, որպես կանոն, կատարվում են մինչև տնտեսվարողի՝ մենաշնորհի դիրք ունենալու կարգավիճակի մասին Հանձնաժողովի որոշման կայացումը, ուսումնասիրությունների արդյունքներն են հիմք հանդիսանում որոշման կայացման համար, ինչից հետևում է, որ Հանձնաժողովի որոշմամբ տնտեսվարողը մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում այն ժամանակահատվածի համար, երբ կարգավիճակն օրենքի իմաստով որակվում է մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, իսկ տնտեսվարողը, սկսած այն ժամանակահատվածից, երբ գործունեությունը համարվել է մենաշնորհային, մինչև ապրանքային շուկայում իրավիճակի այնպիսի փոփոխությունը, որը բացառում է մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունենալու կարգավիճակը, համարվում է մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող»:

(ապրանքային շուկան կարող է սահմանվել շատ լայն և շատ նեղ, մի դեպքում տվյալ շուկայում սուբյեկտների ծավալը մեծ է, մյուս դեպքում՝ քիչ, աշխարհագրական սահմանները, շուկայի ծավալում մասնակցությունը ևս պետք է պարզաբանվեն ելնելով շուկայի սահմանումից)։

Մինչդեռ, մինչև վարույթի հարուցումը, Հանձնաժողովը կոնկրետ որոշակի շուկայում կատարում է (պետք է կատարի) ուսումնասիրություններ, պարզի շուկայի ապրանքատեսակը, աշխարհագրական սահմանը, սուբյեկտներին, նոր միայն հիմքեր հայտնաբերելու դեպքում, կոնկրետ տնտեսվարողի նկատմամբ հարուցի վարույթ։

Հանձնաժողովի 04.03.2002թ № 27 որոշման 1-ին հավելվածով սահմանված է «Ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի որոշման» կարգը, 2-րդ հավելվածով՝ «Ապրանքային շուկաների սահմանների և ծավալների որոշման կարգը»։ 1-ին հավելվածով սահմանված կարգի 2.1. կետի համաձայն՝

«Ապրանքային շուկայի ընդհանուր ծավալում տնտեսվարող սուբյեկտի բաժինը որոշելիս ապահովվում է վերլուծվող ցուցանիշների համադրելիությունը.

- ապրանքային խմբի միևնույն դասակարգչին պատկանելությունը,

- հաշվարկի կատարումը որոշակի ամրագրված ժամանակահատվածի համար,

- մասնակից բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանների նույնությունը:

Ապրանքային շուկայի ընդհանուր ծավալում տնտեսվարող սուբյեկտի բաժինը որոշելու համար.

- ընտրվում է ապրանքատեսակը,

- որոշվում է ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները,

- տեղեկատվություն է հավաքվում տվյալ ապրանքային շուկայի մասնակից տնտեսվարող սուբյեկտների ներքին շուկայում իրացման ծավալների վերաբերյալ և որոշվում է ապրանքային շուկայի իրացման ընդհանուր ծավալը,

- ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա որոշվում է ապրանքային շուկայի ընդհանուր ծավալում տնտեսվարող սուբյեկտի բաժինը (SՍբ): Այն որոշվում է որպես որոշակի ժամանակահատվածում տնտեսվարող սուբյեկտի կողմից շուկայում իրացված որոշակի ապրանքատեսակի ծավալի և տվյալ շուկայում այդ ապրանքատեսակի իրացման ընդհանուր ծավալի հարաբերություն»։

Խնդիրը կայանում է նրանում, որ պարզ չէ, թե երբ է որոշվում ապրանքային շուկան, դա իրականացվում է մինչև կոնկրետ տնտեսվարողի նկատմամբ վարույթի հարուցումը, թե՞ դրան նախորդում է Հանձնաժողովի ուսումնասիրություն մի շարք տնտեսվարողների ներգրավմամբ: Եթե նախորդում է ուսումնասիրություն, ապա դրա հիման վրա կոնկրետ տնտեսվարողի նկատմամբ վարույթ հարուցելիս արդեն իսկ

սահմանվու՞մ է ապրանքային շուկան և վերջինիս գերիշխող դիրքի առկայության մասին նախնական գնահատական տրվու՞մ է: Մինչև միջամտող վարչական ակտի ընդունում տնտեսվարողը հնարավորություն ստանու՞մ է տեղեկանալ ապրանքային շուկայի սահմանման մասին և դրա հիման վրա իրացնել պաշտպանության իր իրավունքը:

Հատկանշական է նաև, որ այս անորոշության պայմաններում Հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածը, պահանջվում են տեղեկություններ: Ինչպես նշված է այդ հոդվածում Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ: Հարկ է նկատել, որ այս լիազորությունը պրակտիկայում մեկնաբանվում է որպես Հանձնաժողովին պատկանող բացարձակ իրավունք, նշված չէ, թե տեղեկատվությունը պահանջելիս, որոշման մեջ ինչ վավերապայմաններ պետք է պահպանվեն (ինչի է պահանջվում կոնկրետ տեղեկատվությունը, վարույթի կոնկրետ որ հարցի պարզաբանմանն է այն ուղղված և այլն/:

Օրենսդրական բացերի և պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս բոլոր հարցերի մասին մինչև միջամտող վարչական ակտի ընդունումը տնտեսվարողը հստակ պատկերացում չի ունենում, ինչը խաթարում է պաշտպանության բուն էությունը: Մինչդեռ հենց ապրանքային շուկայի սահմանումով է պայմանավորված վարույթի ամբողջ ընթացքը[2]:

2. *Պաշտպանության կառուցակարգերը ԵՄ-ում:*

ԵՄ գործադիր մարմնի՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթի օրենսդրական բազայի և ԵՄ Արդարադատության դատարանի (Court of Justice of the European Union) նախադեպային իրավունքի հիման վրա վերլուծենք այն կառուցակարգերը, որոնք երաշխավորում են պաշտպանության իրավունքը մրցակցային օրենսդրության խախտման վարույթների ընթացքում:

ԵՄ գործունեության պայմանագրի[3] 81, 82-րդ (ներկայիս 101, 102-րդ հոդվածներ) հոդվածների հիման վրա Հանձնաժողովը ընդունել է 07.04.2004թ.-ի թիվ 773/2004 կարգավորումը Հանձնաժողովի կողմից պայմանագրի 81, 82-րդ հոդվածների հիման վրա վարույթ իրականացնելու վերաբերյալ[4]: Դրանով կարգավորված են վարույթ հարուցելուց մինչև վարույթի ավարտը հանձնաժողովի լիազորությունները, տնտեսվարողների իրավունքների ապահովման կառուցակարգերը:

---

[2] «Շուկայի սահմանումը հիմնարար դեր ունի մրցակցային վերլուծության համար ԵՄ իրավունքում», «Շուկայի սահմանումը հիմնական գործիքն է, որով նույնականացվում և բացահայտվում են ընկերությունների միջև մրցակցության սահմանները և վերլուծվում է վերջիններիս վարքագծի ազդեցությունը մրցակցային միջավայրի վրա»,- see EU Notice on Market Definition.

«Գերիշխող դիրքի առկայությունը կախված է այն հանգամանքից, թե որքան նեղ կամ լայն ձևով է մատնանշվում շուկան»,- Competition law of the European Community, fifth edition, Van Bael & Bellis, 2010, page 102, 1st paragraph.

[3] The treaty on the functioning of the European Union, Article 101, 102.

[4] COMMISSION REGULATION (EC) No 773/2004 of 7 April 2004 relating to the conduct of proceedings by the Commission pursuant to Articles 81 and 82 of the EC Treaty .

Հանձնաժողովի լիազորությունների նկարագիրը համահունչ է Հանձնաժողովի լիազորություններին և հաշվի առնելով դրա ինստիտուցիոնալ նկարագիրը պրակտիկայում բազմաթիվ վեճերի առիթ հանդիսացել:

Մրցակցային իրավունքի ոլորտում, փաստերի հավաքագրման, հետաքննության և որոշումների կայացման իրավասությունները պատկանում են մեկ մարմնին՝ Հանձնաժողովին[5]:

Հանձնաժողովի գործունեության հակասականությունը ընդգծող հաջորդ բնորոշ գիծն այն է, որ հաճախ պարզ չէ թե խնդիրը վարչական, թե քրեական իրավունքի տիրույթում է գտնվում: Որոշ մասնագետներ պնդում են, որ մրցակցային գործերը «լայնորեն դրսևորում են քրեաիրավական բնութագրիչներ[6]»:

Վարույթի հարուցում.

Հանձնաժողովը կարող է հետաքննություն սկսել թե դիմումի հիման վրա, թե սեփական նախաձեռնությամբ: Սեփական նախաձեռնությամբ վարույթ սկսելու հիմքերից են մամուլում հաղորդագրությունները, շուկայի դիտարկումները, այլ մրցակցային մարմինների հետաքննությունների արդյունքում ձեռք բերված տվյալները և այլն[7]:

Քննության առարկայի սահմանումը.

Հանձնաժողովի կարգավորման[8] հոդված 20-ի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն հետաքննությունը սկսելիս պաշտոնատար անձինք պետք է ներկայացնեն քննության առարկան և նպատակները: Սա նշանակում է, որ Հանձնաժողովը պարտավոր է նշել իր իրավասությունները «այնքան հստակ, որքան հնարավոր է, ինչ է փնտրում և ստուգում իրականացնելու հարցերը[9]»:

Տեղեկատվություն պահանջելու իրավունքը.

Հանձնաժողովը կարող է տեղեկատվություն պահանջել թե հասարակ հարցման, թե որոշում կայացնելու միջոցով: Հասարակ հարցման դեպքում տնտեսվարողը իրավունք ունի պատասխանել դրան, իսկ առանձին որոշման դեպքում՝ պարտավոր է: Առանձին ակտով կայացված որոշման մեջ նշվում է իրավական հիմքը, այն տեղեկատվությունը, որը անհրաժեշտ է ստանալ, ստացման նպատակները և տրամադրման ժամկետները[10]: Առանձին ակտի ձևով կայացվող որոշումը **ենթակա է բողոքարկման** դատական կարգով[11]:

---

[5] Competition law of the European Community, fifth edition, Van Bael & Bellis, 2010, page 976, 4th paragraph.
[6] Competition law of the European Community, fifth edition, Van Bael & Bellis, 2010, page 976, 4th paragraph.
[7] Competition law of the European Community, fifth edition, Van Bael & Bellis, 2010, page 999, 1st paragraph.
[8] COUNCIL REGULATION (EC) No 1/2003 of 16 December 2002 on the implementation of the rules on competition laid down in Articles 81 and 82 of the Treaty.
[9] Minoan Lines v. Commission, {2003} ECR 2-5515 (para. 55).
[10] COUNCIL REGULATION (EC) No 1/2003 of 16 December 2002 on the implementation of the rules on competition laid down in Articles 81 and 82 of the Treaty, Article 18.
[11] Competition law of the European Community, fifth edition, Van Bael & Bellis, 2010, page 1000, 1st paragraph.

Միայն անհրաժեշտ տեղեկատվություն.

Հանձնաժողովը կարող է պահանջել միայն այնպիսի տեղեկատվություն, որն անհրաժեշտ է գործի լուծման համար:

SEP v Commission գործով առաջին ատյանի դատարանը նշել է, որ պահանջվող տեղեկատվությունը հիմնավոր է, եթե «որոշակիորեն կարող է կապ ունենալ ենթադրյալ խախտման հետ»: Գործերից մեկով դատարանը գտել է, որ պահանջվող տեղեկատվությունը անհրաժեշտ չէր, քանի որ Հանձնաժողովը արդեն տիրապետում էր նման ինֆորմացիայի:

Ողջամիտ ժամկետի պահպանումը.

Հանձնաժողովը որոշումը պետք է կայացնի ողջամիտ ժամկետում: Այս պարտականությունը եվրոպական համայնքի հիմնարար սկզբունք է[12]:

Վարույթի տևողությունը վերջնական որոշման վրա ազդեցություն ունեցող գործոն է, որոշ դեպքերում կարող է հանգեցնել նաև տուգանքի նվազեցմանը: Ողջամտության գնահատումը կատարվում է յուրաքանչյուր վարույթի առանձնահատկությունը հաշվի առնելով: Այնուամենայնիվ, դատական պրակտիկայում նշվել է, որ տևողության ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի ոչ թե առարկությունների մասին հայտարարության (Statement of Objections) ծանուցման, այլ դրան նախորդող բոլոր վարչական գործողությունների սկսման պահից[13]: Տուգանքի ձեռնարկը[14] Հանձնաժողովի նախաձեռնողականության դանդաղկոտությունը և վարչական վարույթի անհամաչափ երկար տևողությունը դիտարկում է որպես նշանակվող տուգանքի նվազեցման չափանիշ:

Համաչափության կանոնը.

ԵՄ իրավունքում լայնորեն տարածում է գտել և դատական պրակտիկայում զարգացել է Հանձնաժողովի կողմից վարույթ իրականացնելու համաչափության կանոնը:

«Բոլոր անդամ պետությունների իրավական համակարգերում, հանրային սուբյեկտների կողմից մասնավոր անձանց գործունեության միջամտությունը պետք է ունենա իրավական հիմք և իրացվի օրենքով սահմանված հիմքերի հիման վրա և, հետևաբար, այդ համակարգը պետք է ապահովի պաշտպանություն անհիմն և կամայական միջամտությունից: Այս համատեքստում Դատարանը պետք է գնահատի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Հանձնաժողովի կողմից իրականացված հետաքննությունը արդյոք համապատասխանում է համաչափության սկզբունքին»[15]:

Ընդ որում, Վարույթի կարգավորումների 18-րդ հոդվածի համաձայն՝ համաչափության սկզբունքը վերաբերում է թե Հանձնաժողովի կողմից իրականացվող

[12] SCK and FNK v Commission {1997}, (para. 56).
[13] FEG & TU v. Commission {2003} (para. 74).
[14] The Fining Guide
[15] Dow Chemical Iberica and Others v. Commission, fn. 269 (para 16).

ընդհանուր հետաքննությանը, այնպես էլ կոնկրետ գործողություններին, ինչպիսին կարող է լինել տեղեկատվություն պահանջելու հարցումները[16]:

Լռելու իրավունքը.

Այս իրավունքին անդրադառնալիս անհրաժեշտ է նշել, որ այն սահմանափակ բնույթի կիրառություն ունի Հանձնաժողովի կողմից մրցակցային օրենսդրության խախտումների վարույթների ընթացքում, որն էլ պայմանավորված է վերջինիս գործունեության արդյունավետությունը չխաթարելու հետ:

Գործերից մեկով Արդարադատության դատարանը գտել է, որ տնտեսվարողը կարող է օգտվել լռության իր իրավունքից այն դեպքում, երբ Հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունը կարող է մեկնաբանվել որպես խախտումի կատարումը ընդունելու վերաբերյալ պահանջ այն պարագայում, երբ այդ հանգամանքը պետք է ապացուցի Հանձնաժողովը[17]:

Լռության պահպանելու իրավունքը չի տարածվում, օրինակ, փաստաթղթերի տրամադրման պահանջը մերժելիս, նույնիսկ այն դեպքում, երբ դրանց ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը կարող է հիմնավորել խախտման առկայությունը[18]:

Լսումներ իրականացնող պաշտոնատար անձ.

Լսվելու իրավունքը արդյունավետ իրացնելու համար Հանձնաժողովի կազմում գործում է «Լսող պաշտոնյայի» (The Hearing Officer) ինստիտուտը:

Նկատի ունենալով, որ ինչպես արդեն նշվել է Հանձնաժողովը միաժամանակ քննություն իրականացնող և որոշում կայացնող մարմին է, անհրաժեշտություն է առաջացել հնարավորին չափ անկախ լիազորություններով պաշտոնատար անձի կողմից գործը լսելու ինստիտուտի անհրաժեշտություն:

Ինչպես նշված է Լսող պաշտոնյայի մանդատում[19] նպատակն է վարչական վարույթը վստահել մրցակցային հարցերում մասնագիտացում ունեցող պաշտոնատար անձի, որը ի վիճակի է օբյեկտիվ, թափանցիկ և արդյունավետ քննել վարույթը:

Առարկությունների վերաբերյալ հայտարարություն (Statement of Objections).

Պաշտպանության իրավունքը ապահովող լրջագույն ինստիտուտ է հանդիսանում Առարկությունների վերաբերյալ հայտարարության (այսուհետ՝ SoA) ինստիտուտը: Որպես պաշտպանության իրավունքի իրացման երաշխիք այն դիտարկվում է

[16] Regulation on Procedure, Article 18(1).
[17] Orkem v. Commission, fn.120 (para. 35).
[18] Commisssion v. SGL Carbon, fn.120 (para.44).
[19] Hearing Officer's Mandate.

Եվրոպական հանձնաժողովի կողմից գերիշխող դիրքի չարաշահման հակիրճ ուղեցույցում[20]:

Վարույթի հարուցումից հետո Հանձնաժողովը պարտավոր է ծանուցել պաշտպանվողներին իր առարկությունների մասին, որոնք վերաբերում են այն պրակտիկային, որը հետաքննվում է[21]: Այն հասցեատիրոջ համար հասկանալի լեզվով քննարկում է այն փաստերը և իրավական հիմնավորումները, որոնց հիման վրա Հանձնաժողովը հանգել է նախնական եզրակացության, որ խախտվել են ԵՄ պայմանագրի 81-րդ և 82-րդ հոդվածները և բացահայտում է Հանձնաժողովի մտադրությունը տուգանք նշանակելու մասով[22]:

SoA-ն սահմանում է վարույթի շրջանակները, այնտեղ նշված հարցերից բացի այլ հարցեր վերջնական որոշման մեջ չեն կարող քննարկվել[23]:

Նույն կերպ, միայն այն փաստաթղթերը կարող են համարվել ապացույց, որոնց մասին նշված է SoA-ի մեջ: Դրանցից բացի այլ փաստաթղթեր չեն կարող թույլատրելի ապացույց համարվել[24]:

3. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ.

ԵՄ	ՀՀ
Պաշտպանության կառուցակարգեր	Պաշտպանության կառուցակարգեր
1. Վարույթը հարուցելիս քննության առարկայի սահմանման պարտականություն: 2. Առանձին միջանկյալ ակտեր ընդունելիս (օրինակ տեղեկատվություն պահանջելու մասով) դրա հիմնավորումների ներկայացման պարտականություն: 3. Միջանկյալ ակտերը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն: 4. Մինչև վերջնական որոշման կայացումը հատուկ փաստաթղթի՝ SoA-ի հրապարակում, որը	1. Վարույթը առարկայի սահմանող նորմի բացակայություն, որի արդյունքում պրակտիկայում առաջանում է անորոշություն: 2. Տեղեկատվություն պահանջելու բացարձակ իրավունք թե վարույթի շրջանակներում, թե դրա շրջանակներից դուրս: 3. Միջանկյալ ակտերը բողոքարկելու հնարավորության բացակայություն: 4. Ապրանքային շուկայի անորոշություն, որի արդյունքում հնարավոր է, մինչև վարույթի

[20] http://ec.europa.eu/competition/publications/factsheets/antitrust_procedures_102_en.pdf.

[21] Implementing Regulation, Article 10(1).

[22] Regulations on Procedure.

[23] Regulations on Procedure, Article 27(1).

[24] Ahlstrom Osakeyhtio and Others v. Commission, fn. 109.

սահմանում է վարույթի շրջանակները և դրանից դուրս գալ չի թույլատրվում:	ավարտը, տնտեսվարողը չիմանա մեղադրանքի էությունը:

5. ՕՐԵՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՈՒՄԸ

74. Հայաստանի էլեկտրական ցանցերը դիմելով դատարան ընդդեմ Հանձնաժողովի, խնդրել են վերացնել հանձնաժողովի 23.02.2015թ № 26-Ա որոշումը (գործ №՝ ՎԴ-1504/05/15): Հայցվորի իրավական փաստարկը կայանում էր վարչական տույժ նշանակելու ժամկետին:
75. Ըստ Հայցվորի, Հանձնաժողովը իրավունք ունի վարչական տույժ նշանակել օրենքով նախատեսված ժամկետներում, քանի որ վարչական տույժ նշանակելու ժամկետները չեն կարող լինել անսահմանափակ և պետք է որոշակի ժամկետով սահմանափակված լինեն:
76. Որպես իրավական փաստարկ, Հայցվորը հղում է կատարել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին մասի, որի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:
77. ՀՀ վարչական դատարանը 02.12.2015թ կայացրեց վճիռ, որի համաձայն մերժեց Հայցվորի հայցը: Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Վարչական դատարանը անդրադառնալով վարչական տույժ նշանակելու ժամկետներին և այդ ժամկետները համադրելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի հետ գտել է.

> «Հայցվորը հայցադիմումում մասնավորապես վկայակոչել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը (Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու

օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի) և նշում, որ պատասխանողը բաց է թողել սահմանված ժամկետը: Սակայն, դատարանը մեկ անգամ ևս նշում է, որ սույն իրավահարաբերությունների նկատմամբ չի տարածվում վկայակոչված նորմը, քանի որ այս պարագայում առկա է առանձին տեսակի վարչական վարույթ, որի առանձնահատկությունները և վրա հասնող պատասխանատվությունը սահմանված է Օրենքով, իսկ տվյալ օրենքը պատասխանատվության ենթարկելու համար ժամկետների որևէ սահմանափակում չի նախատեսում»:

78. Վերոգրյալ դիրքորոշման համար դատարանը, որպես իրավական հիմք հաշվի է առել Վարչարարության հիմունքների մասին օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «3. Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»:
79. Վերոգրյալ դիրքորոշմամբ իրավակիրառ պրակտիկայում առկա է դատարանի վկայակոչած այն իրավիճակը, երբ Օրենքով պատասխանատվության ենթարկելու համար ժամկետների որևէ սահմանափակում չի նախատեսում և պատասխանատվության ենթարկելու համար որևէ ժամկետով հանձնաժողովը սահմանափակված չէ: Այլ կերպ ասած, հանձնաժողովը կարող պատասխանատվության ենթարկել մի անձի, որի կատարած իրավախախտումը տեղի է ունեցել, օրինակ, մի քանի տարի առաջ:
80. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ և 332-րդ հոդվածների համաձայն՝ Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է: Իրավական նորմը սահմանում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կողմից իրավունքը խախտված անձի հայցով. պաշտպանության ժամկետը այն է՝ որպես ընդհանուր կանոն երեք տարի:
81. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի/ և նշում, որ պատասխանողը բաց է թողել սահմանված ժամկետը:
82. Իրավական նորմով ժամկետային սահմանափակում է մտցվում վարչաիրավական հարաբերություններում, որի համաձայն անձինք կարող են պատասխանատվության

ենթարկվել երկու ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ տեղի է ունեցել խախտումը: Հարկերի մասին ՀՀ օրենքի 30.1.-րդ հոդվածի համաձայն՝ Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերի:

83. Վերոգրյալ իրավական նորմով պատասխանատվության ժամկետները սահմանափակվել են հարկային իրավահարաբերությունում: Վերոգրյալ շարքը կարելի է համալրել բազմաթիվ այլ իրավահարաբերություններում առկա կանոններով, երբ որևէ պատասխանատվության միջոց կիրառելու համար սահմանված է կոնկրետ ընթացակարգային ժամկետ:
84. Վերոգրյալ իրավական սահմանումը ունի իր հիմնավորումը: Ցանկացած իրավախախտում արձանագրվում և կիրառվում է պատասխանատվության միջոց ապացույցների հիման վրա: Վարչական վարույթում ապացույցներ են հանդիսանում՝ (Վարչարարության հիմունքների մասին օրենքի 42-րդ հոդված) գործում առկա **բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը**, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:
85. Վերոգրյալ ապացույցները ունեն իրենց վաղեմության ժամկետները, օրինակ՝ **բացատրությունները** և **ցուցմունքները** հիմնված են հիշողության հիման վրա, որը ժամանակի ընթացքում մոռացվում է, փորձագիտական եզրակացությունը հիմնված է առկա փաստերի հիման վրա, որը ժամանակի ընթացքում կորցնում է իր նշանակությունը կամ բովանդակությունը, փաստաթղթերը կորում են, իրերը փչանում և այլն:
86. Այսինքն, վարչական իրավահարաբերության կողմը ժամանակի ընթացքում ձեռք է բերում և պահպանում իր փաստարկները հիմնավորող ապացույցները և այդ ապացույցները պահպանում են այն ժամանակահատվածում, որի ընթացքում հնարավոր է տեղի ունենա իրավական միջամտող հետևանք:
87. Վերոգրյալը ամբողջությամբ համադրելով դատարանի (գործ թիվ ՎԴ-1504/05/15) և իրավական նորմերի այն կանոնների հետ, որի համաձայն Օրենքը պատասխանատվության ենթարկելու համար ժամկետների որևէ սահմանափակում չի նախատեսում, կարող ենք եզրակացնել, որ այն չի համապատասխանում իրավական որոշակիության հիմնարար սկզբունքին:
88. Վերոգրյալ խնդրից ելնելով, տնտեսվարող սուբյեկտները պետք է յուրաքանչյուր ցուցաբերած վարքագծից հետո (որը հնարավոր է ապագայում մեկնաբանվի ի վնաս

իրենց) հավաքագրել ապացույցներ և այդ ապացույցները երկարաժամկետ պահպանել, քանի որ հնարավոր է մի քանի տարի անց ենթարկվեն պատասխանատվության:

89. <u>Էմորշին ՍՊԸ-ն</u> դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հանձնաժողովի, խնդրելով վերացնել հանձնաժողովի № 379-Ա և 487-Ա որոշումները: Վեճի նյութաիրավական հիմքը հանձնաժողովի կողմից տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցմանը օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելն էր:

90. Հանձնաժողովը 27.03.2014թ № ԱԾ-753 գրությամբ ցանկացել է ստանալ հետևյալ տեղեկությունները. *«փայաբաժինը ձեռքբերող ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հեռախոսահամար, հասցե, անձնագրի տվյալներ, գործարքով ձեռքբերվող փայաբաժնի չափը՝ տոկոսով, գործարքի արդյունքում նրան պատկանող փայաբաժնի չափը՝ տոկոսով. այն տնտեսվարող սուբյեկտների ցանկը, որտեղ փայաբաժին ձեռքբերող անձն ունի մասնակցություն և փայաբաժնի չափը՝ տոկոսով:»*

91. Հայցվոր կողմը վարչական դատարանում հղում էր կատարում Վարչարարության հիմունքների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ մասին, որի համաձայն՝ Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

92. Հանձնաժողովի կողմից հայցվող տեղեկատվությունը վերաբերվում էր այնպիսի տեղեկատվության, որը մշակվում է իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին ՀՀ օրենքով, որի իրականացումը դրված է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից:

93. Այսինքն, վերոգրյալ տեղեկատվությունը վերաբերվում էր վարչական մարմինների փոխադարձ օգնությանը, որը կարգավորվում է Վարչարարության հիմունքների մասին օրենքի 14-ից 18-րդ հոդվածներով: Հայցվորը գտնում էր, որ Հանձնաժողովը կարող էր և պարտավոր էր դիմել փոխօգնության և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն այն վարչական մարմնից, որը տիրապետում է այդ տեղեկատվությանը:

94. ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/7424/05/14 դատական գործով կայացրել է վճիռ, որտեղ մերժել է Հայցվորի պահանջը: Որպես վերոգրյալ փաստարկների հերքող իրավական հիմնավորում, դատարանը նշել է հետևյալ դիրքորոշումը.

> *«Ինչ վերաբերում է հայցվորի այն փաստին, որ Հանձնաժողովը կարող էր տեղեկատվության մի մասը ստանալ ՀՀ արդարադատության նախարարության*

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից, պետք է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունն ամբողջական տեղեկատվություն չի պարունակում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ, հետևաբար ուսումնասիրության օպերատիվությունն ու ամբողջականությունն ապահովելու նպատակով նշված տեղեկատվությունը կարող էր պահանջվել միայն հայցվորից (մասնավորապես, օրինակ՝ ֆինանսական փաստաթղթերի մասով): <u>Դրանից բացի, եթե ընդունենք, որ նշված փաստարկը հիմնավոր է, ապա այն միևնույն է որևէ կերպ չէր կարող իրավական հիմք հանդիսանալ վիճարկվող ակտը ոչ իրավաչափ ճանաչելու համար, քանի որ զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվել է հենց հայցվորին ուղղված պահանջը չկատարելով»</u> (Ընդգծումը մերն է):

95. Վերոգրյալ իրավական փաստարկները և կանոնները անհրաժեշտ է համադրել Վարչարարության հիմունքների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ մասի հետ, որի համաձայն՝ եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:
96. Վերոգրյալ սկզբունքի բուն բովանդակության համաձայն՝ այն դեպքերում, երբ վարչական մարմինների մոտ առկա տեղեկատվությունը, այդ թվում վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ եզրահանգում կայացնելու համար, ապա պարտավոր է ինքնուրույն իր հաշվին ձեռնարկել միջոցներ այդ տեղեկատվությունը ձեռք բերելու համար:
97. Վերոգրյալ հավաստիության կանխավարկած սկզբունքի նպատակը փոխվստահության հաստատագրումն է: Մասնավոր անձինք, որոնք հանրային իշխանությամբ օժտված վարչական մարմիններին վստահելու անհրաժեշտություն ունեն, որը որոշ դեպքերում փոխակերպվում է նույնիսկ վարչական ակտերի նկատմամբ վստահության իրավունքի, իրավունք ունեն ակնկալելու, որպեսզի վարչական մարմինները նույնպես իրենց վստահեն:
98. Այսպիսով, մասնավոր անձի կողմից վարչական մարմին ներկայացրած ցանկացած տվյալ համարվում է հավաստի, եթե հակառակը վարչական մարմինը չի ապացուցել, իսկ այդ տեղեկատվությունները հավաստող փաստաթղթեր ներկայացնելու վարչական մարմինների պահանջը անթույլատրելի է, եթե <u>օրենքով նախատեսված չէ մասնավոր անձի կողմից կոնկրետ փաստաթուղթ ներկայացնելու պահանջ</u>:
99. Վարչական մարմինը, սակայն կարող է կասկածել անձի ներկայացրած տեղեկությունների հավաստիության իսկությանը, բայց այդ կասկածը պետք է լինի

հիմնավոր: Տեղեկությունների հավաստիության համար վարչական մարմինը իր նախաձեռնության և միջոցներով պարտավոր է իրականացնել համապատասխան գործողություններ և հավաքագրել փաստաթղթեր, որպեսզի հավաստիանա: Վարչական մարմինը դրա իրականացման համար իրավունք չունի պարտականություն դնել մասնավոր այդ անձի վրա, կամ այլ կերպ անհանգստացնելու նրան:

100. Օրենքը նախատեսում է պատասխանատվության միջոց (36-րդ հոդված)՝ 7. Տնտեսվարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:
101. Վերոգրյալ իրավական նորմի համաձայն, այն դեպքում, երբ ըստ վարչական մարմնի, անձը ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ, անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության: Այնինչ, եթե անձը վարչական մարմին չի ներկայացնում պահանջվող տեղեկատվությունը կամ տեղեկատվության որոշ մասը, վարչական մարմնի մոտ չի առաջանում այն կանխավարկածը, որ անձը չունի այդ տեղեկատվությունը, և այդպիսով չի ներկայացրել այն, այլ առաջանում է այն կանխավարկածը, որ անձը տիրապետում էր այդ տեղեկատվությանը և չի ներկայացրել այն, զանցառու է և իրավախախտ:
102. Վերոգրյալ փաստական հանգամանքը կոնկրետ վերոգրյալ դատական գործի օրինակով կարող է հավաստվել հանձնաժողովի կողմից ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից Վարչարարության հիմունքների մասին օրենքով սահմանված կարգով փոխօգնության կարգով ստանալու տեղեկատվություն և դրանից հետո արձանագրել, որ առկա է տեղեկատվությունը, որը Հայցվորը չի ներկայացրել հանձնաժողով:
103. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի ութերորդ պարբերության համաձայն՝ **Տնտեսվարող սուբյեկտի ներկայացրած տեղեկատվության արժանահավատության** և (կամ) փաստացի գործունեության բացահայտման և (կամ) **Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով հսկիչ գնումներ կարող է իրականացնել** նաև Հանձնաժողովը:
104. Օրենքը և դատական պրակտիկան բացառում է սկզբունքի անմիջական ներգործությունը, և ինչպես նշում է դատարանը վերոգրյալ գործով. «եթե ընդունենք, որ նշված փաստարկը հիմնավոր է, ապա այն միևնույն է որևէ կերպ չէր կարող իրավական հիմք հանդիսանալ վիճարկվող ակտը ոչ իրավաչափ ճանաչելու համար,

քանի որ զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվել է հենց հայցվորին ուղղված պահանջը չկատարելով»:

105. **«Արայ» ՍՊԸ-ի** ընդդեմ ՀՀ Հանձնաժողովի՝ ՀՀ Հանձնաժողովի 30.07.2013 թվականի թիվ 184-Ա որոշումը (որոշման 2-րդ կետը)՝ «Արայ» ՍՊԸ-ի մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/9756/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 02.07.2014 թվականի վճռի դեմ ընկերության կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք:

106. Հայցվորը վերաքննիչ դատարանում բարձրացրել է ներքոգրյալ իրավական խնդիրները.

1) Հանձնաժողովը չի պահպանել վարչական վարույթի ժամկետները:

Սույն իրավական փաստարկի ժամանակ Հայցվորը նշելով, որ ուսումնասիրության նպատակը վարչական ակտ ընդունելն է և այդ ժամկետից է սկսվում վարչական վարույթի ժամկետը: Որպես իրավական հիմք հղում է կատարել Վարչարարության հիմունքների մասին օրենքի 19-րդ հոդվածը, որի համաձայն՝ Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

2) Տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը չի ապահովել վարչական վարույթի գործերի վարման կարգը:

Սույն իրավական փաստարկի ժամանակ Հայցվորը նշել է, որ Հանձնաժողովը խախտել է Վարչարարության հիմունքների մասին օրենքի 28-րդ հոդվածը և օրենքով սահմանված կարգով չի հաշվառել վարչական վարույթի նյութերը:

107. Վարչական վերաքննիչ դատարանը 2014 թվականի նոյեմբերի 20-ին կայացրել է վերաքննիչ բողոքը մերժելու որոշումը: Վերաքննիչ դատարանը անդրադառնալով վերոգրյալ իրավական խնդիրներին և վեճին, հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը:

> *«Հանձնաժողովին, ի թիվս այլ լիազորությունների, վերապահված է վարչական վարույթ հարուցելու, ստուգում, ուսումնասիրություն իրականացնելու մասին որոշումներ ընդունելու լիազորությունները: Ընդ որում, **<u>եթե ուսումնասիրության իրականացման արդյունքում պարզվում է, որ շուկայում առկա չեն գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, ապա այդ դեպքում Հանձնաժողովի կողմից չի ընդունվում վարչական ակտ:</u>***
> *Սույն գործի փաստերի համաձայն՝ Հանձնաժողովի 29.04.2013 թվականի թիվ ՍԾ-729 գրությամբ Ընկերության տնօրենին հայտնել է, որ տվյալ ժամանակահատվածում Հանձնաժողովը ուսումնասիրություն է իրականացնում էլեկտրատեխնիկայի շրջանառության բնագավառում:*

*Հետևաբար, նշված գրության օրը չի կարող համարվել վարչական մարմնի կողմից վարչական ակտ ընդունելուն ուղղված գործողության կատարման սկիզբ, քանի որ տվյալ պահին՝ 29.04.2013 թվականին, **<u>ընդամենն ազդարարվել է էլեկտրատեխնիկայի շրջանառության բնագավառում ուսումնասիրության իրականացման սկիզբը</u>**»։*[25]

108. Վարչական վերաքննիչ դատարանը անդրադառնալով բողոքաբերի երկրորդ հիմքին, որը վերաբերվում էր Վարչարարության հիմունքների մասին օրենքի 28-րդ հոդվածի, ՀՀ Կառավարության 25.06.20-4 թվականի թիվ 975-Ն որոշմանը, նշել է հետևյալ դիրքորոշումը.

«Ինչ վերաբերում է բողոք բերող անձի այն պնդմանը, որ վարչական վարույթի գործում առկա որևէ նյութ, փաստաթուղթ համարակալված չէ, գործը չունի շապիկ, հերթական համար, դրանում բացակայում է նշում այն մասին, թե ում նախաձեռնությամբ է վարույթը հարուցվել, վարույթը սկսվելու տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը, գործում առկա փաստաթղթերի անվանական ցանկը, գործը կարված և կնքված չի եղել, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նշվածը չի կարող որոշման անվավերության հանգեցնող հանգամանք հանդիսանալ»։

109. Բողոքաբերը վարչական վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը 18-02-2015 թվականի որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունել: Վերոգրյալ իրավական եզրահանգման և օրենքով սահմանված կանոնների հիման վրա կարելի է եզրակացնել ներքոգրյալ իրավական պրակտիկան:
110. Օրենքի 30-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված վարչական վարույթի 90-օրյա ժամկետը չի տարածվում Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունների վրա: Որպես եզրահանգման իրավական հիմք Հանձնաժողովը, վարչական դատարանը, վարչական վերաքննիչ դատարանը նշում են այն հանգամանքը, որ **<u>եթե</u>** ուսումնասիրության իրականացման արդյունքում պարզվում է, որ շուկայում առկա չեն գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, ապա այդ դեպքում Հանձնաժողովի կողմից չի ընդունվում վարչական ակտ:

[25] Ընդգծումը մերն է:

111. Հանձնաժողովի կողմից Վարչարարության հիմունքների մասին օրենքի 28-րդ հոդվածով սահմանված իմպերատիվ կանոնները խախտելը չի կարող հանգեցնել Հանձնաժողովի կողմից կայացված վարչական ակտի անվավերության:
112. Այսպիսով, սույն ուսումնասիրության և վերլուծության համար անհրաժեշտ է վերոգրյալ իրավական կանոնները և պրակտիկան համադրել Սահմանադրության և վարչարարության հիմնարար սկզբունքների հետ: Նախ՝ արձանագրենք, որ սույն ուսումնասիրությունը չի հետապնդում նպատակ ստուգել ուժի մեջ մտած դատական ակտերի իրավաչափությունը: Ուսումնասիրության նպատակը նորմատիվ իրավական ակտերում և այդ ակտերի հիման վրա ընդունված անհատական իրավական ակտերում սահմանված կանոնների և պրակտիկայի համադրությունն է հիմնարար սկզբունքների հետ և արդյունքում հակասության բացահայտումն ու վերհանումը:
113. Վարչարարության հիմունքների մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ 2) ***վարչարարություն*** ՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:
114. Վարչական մարմինները, այդ թվում տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, հանրային իրավունքի ոլորտում իշխանական լիազորություններով օժտված մարմին է: Իրականացնելով հանրային ոլորտում իշխանական լիազորությունները մասնավոր անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:
115. Վարչական մարմնի արտաքին ներգործություն ունեցող որևէ գործունեություն ինքնանպատակ չէ և պետք է հետապնդի նպատակներ, որոնց հասնելով էլ այդ գործողությունը պետք է եզրափակվի: Վարչական մարմինը չի կարող գործունեությունը ծավալել լոկ գործելու պատրանք առաջացնելու համար, ինչպես դա իրականում, երբեմն, տեղի է ունենում: Դա էական չափով հարկատուների միջոցների հաշվին գոյացող պետական կամ համայնքային բյուջեի միջոցների վատնում է:
116. Վարչական մարմինների հիմնական գործառույթային նպատակը ՀՀ Սահմանադրության և օրենքների իրականացումն է (կատարումը) իրավական պետության սկզբունքներին և կանոններին համապատասխան: Վարչական մարմիններն այդ նպատակին կարող են հասնել միայն այն դեպքում, երբ իրենց գործունեությունը սկզբից մինչև վերջ ենթարկվեն որոշակի հստակ և թափանցիկ կանոնների: Նման կանոնները կանխորոշում են վարչական մարմինների կողմից իրենց խնդիրների իրականացումը, եթե վարչական մարմինները հետևում են այդ կանոններին: Իհարկե, վարչական մարմինների գործողության մանրախնդիր և

համընդգրկուն կանոնակարգումն անհնար է: Դա նաև կհակասի գործադիր իշխանության էությանը, որը ենթադրում է գործադիր մարմինների որոշակի հայեցողական ազատություն՝ իրենց նպատակների իրագործման հարցում: Սակայն օրենսդիրն է, որ սահմանում է այդ նպատակները և առավել մանրամասնությամբ կամ միայն ընդհանուր կերպով որոշում դրանց հասնելու միջոցները:

117. Այսպիսով, վարչական մարմինների՝ վերոնշյալ նպատակներով պայմանավորված արտաքին ներգործությանն ուղղված գործունությունը պետք է իր տրամաբանական ավարտին հասնի, արտահայտվելով որոշակի իրավական ակտի կամ փաստացի ներգործության տեսքով: Այդ գործունեությունը, ըստ Վարչարարության հիմունքների մասին օրենքի, եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտի ընդունմամբ, ինչպես նաև գործողությամբ կամ անգործությամբ, որը մասնավոր անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: Իսկ, քանի որ իրավական՝ նորմատիվ կամ վարչական ակտը մասնավոր անձանց համար պարտադիր կերպով իրավական հետևանքներ է առաջացնում, ապա այդ գործողությունն ըստ արդյունքի կարելի է դասակարգել իրավական և փաստական հետևանքներ առաջացնող գործունեություն:
118. Այսպիսով, կիրականացնենք վերոգրյալ իրավական վերլուծությունների համադրումը ներկայացված դատական պրակտիկայի և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կանոնների հետ: Իրավակիրառ վեճը վերաբերվում է Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրություններին և այդ ուսումնասիրության նկատմամբ իրավական գնահատականին:
119. Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ կանոնները Օրենքը բացահայտում է հետևյալ չափով:

Օրենքի հոդվածներ	Իրավական կանոններ
Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի 2-րդ և 3-րդ մասեր	1.Հանձնաժողովն իրավունք ունի՝ ա) ընդունելու որոշումներ՝ - ապրանքային շուկաների ուսումնասիրության, - վարչական վարույթ հարուցելու ստուգում, ուսումնասիրություն իրականացնելու,
Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետ	գ) տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվ. արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշման կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով

	իրականացնելու ստուգում, ուսումնասիրություն (այդ թվում՝ հսկիչ գնում) և (կամ) դիտանցում.
Օրենքի 19-րդ հոդվածի 1² կետ	Եթե որևէ տնտեսվարող սուբյեկտ սահմանված ժամկետում չի ներկայացնում քննարկման, վարույթի, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն կամ այլ կերպ խոչընդոտում է դրանց ընթացքը կամ բացակայում են դրանց համար անհրաժեշտ փաստաթղթերն ու այլ տեղեկատվությունը, ապա Հանձնաժողովն իրավասու է որոշումներ կայացնելու իր տրամադրության տակ առկա փաստաթղթերի և այլ տեղեկատվության հիման վրա: Սույն մասով նախատեսված որոշումների ընդունումը տնտեսվարող սուբյեկտներին չի ազատում փաստաթղթեր և այլ տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունից կամ դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու կամ սույն մասով սահմանված լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար սահմանված պատասխանատվությունից:

120. Վերոգրյալ իրավական ակտերի համակարգային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Օրենքով սահմանված չեն ուսումնասիրության կոնկրետ ընթացակարգերը, այսինքն՝ բացակայում են այն կանոնները, որոնց հիման վրա պետք է հանձնաժողովը իրականացնի իր լիազորությունները, բացակայում են վարույթի օրինականության պահպանման երաշխիքներ, ուսումնասիրության մասնակիցների իրավունքների և պարտականությունների հստակ ամրագրումներ:
121. Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությունը կազմված է ՀՀ Սահմանադրությունից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և այլ իրավական ակտերից:
122. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի տարածքում իրենց լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված են - Հանձնաժողովը:
123. «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է Հայաստանում կամ օտարերկրյա պետություններում գրանցված և Հայաստանի տարածքում գործունեություն իրականացնող առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի), իրավաբանական անձի մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի

(այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ) գործունեության ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է դրանց իրականացման միասնական կարգը:

124. Նույն օրենքի 3-րդ մասի համաձայն՝ ուսումնասիրությունը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը՝ վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և Հայաստանի օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում՝ պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է, բացառությամբ սույն կետի ութերորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:
125. Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ Օրենքը ամբողջությամբ չի կարգավորում ուսումնասիրության իրականացման կանոնները, ժամկետները, իսկ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը, որպես օրենքի սուբյեկտ ճանաչում է Հանձնաժողովին:
126. Ստուգումների կազմակերպման մասին ՀՀ օրենքի առաջին հոդվածը նշում է, որ Օրենքը կարգավորում է …. ուսումնասիրության իրականացման կարգը, ինչպես նաև բացահայտում է վարչական մարմինների կողմից ուսումնասիրության իրականացման բովանդակությունը և որոշակի սահմանումներ է տալիս իրավահարաբերությանը:
127. Գտնում ենք, որ այս պարագայում ոլորտում բավարար չափով կարգավորված չեն Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունների իրավահարաբերությունը: Ի հակառակ այս ոլորտի, հարկային մարմինների կողմից իրականացվող ուսումնասիրությունները բավարար չափով կարգավորված են՝ սահմանելով և վարչական մարմնի և մասնավոր անձանց գործողությունները և դրանց հետևանքները:
128. Որպեսզի իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ իրավական գնահատական տրվի, անհրաժեշտ է նախ պարզել, թե որոնք են համարվում վարչարարության իրականացման արդյունքում իրավական հետևանքներ առաջացնող գործողություններ, իսկ որոնք փաստական հետևանքներ առաջացնող հետևանքներ:
129. Իրավական հետևանքներ առաջացնող գործունեություն իր գործունեությանը արտաքին ներգործություն հաղորդելու ու դրանով նաև իր իշխանական լիազորություններն իրականացնելու նպատակով վարչական մարմինը կարող է և պարտավոր է գործի դնել ինչպես իրավակարգավորիչ, այնպես էլ փաստացի, ֆիզիկական միջոցներ: Թե ո՞ր դեպքում է ընդունվում իրավական ակտ, և ո՞ր

դեպքում է ապահովվում ֆիզիկական ներգործություն իրավիճակի վրա, կարգավորվում է, որպես կանոն, օրենքներով:

130. Իրավական ակտի և փաստացի ներգործության տարբերությունն այն է, որ իրավական ակտն ուղղված է՝ որևէ իրավիճակի կարգավորմանը, ունի իդեալական էություն, առաջացնում է իրավական հետևանքներ և դեռևս ենթակա է կատարման: Իսկ փաստացի ներգործությունը ֆիզիկական այն ազդեցությունն է, որն առաջացնում է իրավիճակի փաստացի փոփոխություն կամ փոփոխության ենթակա իրավիճակի պահպանում:
131. Երբ վարչական մարմինը ընդունում է գերատեսչական նորմատիվ կամ վարչական ակտ, ապա նա կարգավորում է որոշակի հարցեր տարբեր իրավական հարթություններում և տարբերակվող վերացականությամբ՝ մի դեպքում խոսքն անորոշ (նորմատիվ իրավական ակտ), մյուս դեպքում խիստ որոշակի կամ որոշակիացման ենթարկվող (անհատական՝ վարչական ակտ) հասցեատերերի մասին է:
132. Որպեսզի վերոգրյալ սահմանումները լինեն ավելի առարկայական, ներքոգրյալում կներկայացնենք երկու պրակտիկ օրինակ, որտեղ սահմանված են վերոգրյալ վերլուծությունների արդյունքում ձևավորված եզրահանգումները:
133. **Օրինակ 1.** Որևէ անձի պետական կենսաթոշակ նշանակելը իրականացվում է միայն վարչական ակտի միջոցով: Օրենքը պահանջում է, որպեսզի պետական կենսաթոշակի իրավունք ունեցող անձը դիմի համապատասխան վարչական մարմին իր այդ իրավունքը իրացնելու համար: Վարչական մարմինը չի կարող հենց այնպես, առանց անհատական ակտի, անձին տրամադրել կենսաթոշակ: Իսկ վարչական ակտի կայացումից հետո անձը ստանում է այդ իրավունքը և շարունակում է օգտվել այդ իրավունքից:
134. **Օրինակ 2**. Ճանապարհային ոստիկանությունը ազատում է փողոցին հարող մասնավոր սեփականության իրավունքով որևէ մեկին պատկանող շինության մուտքը վթարված ավտոմեքենայից, ապա նա դրանով փաստացի է ներգործում անձի իրավունքը սահմանափակող իրավիճակի վրա՝ առանց իրավակարգավորիչ բովանդակությամբ ակտ ընդունելու:
135. **Ի մի բերելով վերոգրյալը, պարզ է դառնում հետևյալը, իրավական հետևանք առաջացնող վարչարարությունը ունի հետևյալ բաղադրիչները, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր չէ:**
    1) ուղղված է իրավիճակի կարգավորմանը.
    2) ունի իդեալական էություն.
    3) առաջացնում է իրավական հետևանքներ.
    4) դեռևս ենթակա է կատարման:

136. **Փաստացի հետևանքներ առաջացնող վարչարարությունը ֆիզիկական այն ազդեցությունն է, որն առաջացնում է իրավիճակի փաստացի փոփոխություն կամ փոփոխության ենթակա իրավիճակի պահպանում: Վերոգրյալից ելնելով անհրաժեշտ է պարզել, արդյոք Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները իրավական հետևանք առաջացնելու ուղղված են թե ոչ, այսինքն՝ հանձնաժողովի կողմից իրականացվող վարչարարությունը փաստական, թե իրավական հետևանքներ է առաջացնում:**

137. Մինչ վերոգրյալ հարցի պարզումը, անհրաժեշտ է արձանագրել հանձնաժողովի պրակտիկ տեսակետը այդ հարցի վերաբերյալ, ինչպես նաև դատարանների կողմից ցուցաբերած դիրքորոշումը:

138. Հանձնաժողովը դատարանում նշել է, որ «երբ ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ տվյալ շուկայում առկա չեն գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, այդ դեպքում Հանձնաժողովի որոշումը շուկայի ուսումնասիրության արդյունքների ամփոփման վերաբերյալ չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ չունի արտաքին ներգործություն, չի հետապնդում հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակ, ուղղված չէ անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:»

139. Դատարանը իր անհատական իրավական ակտով հաստատել է վերոգրյալը, նշելով, որ «եթե ուսումնասիրության իրականացման արդյունքում պարզվում է, որ շուկայում առկա չեն գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, ապա այդ դեպքում Հանձնաժողովի կողմից չի ընդունվում վարչական ակտ»:

140. Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ 1. Սույն օրենքի իմաստով տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհի դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռք բերող չունի մրցակից: 6. Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում Հանձնաժողովի որոշմամբ: 7. Մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի լուծարման (պետական հաշվառումից հանելու) համար պարտադիր է Հանձնաժողովի կողմից տրամադրվող տեղեկանքն առ այն, որ Հանձնաժողովը չի առարկում տնտեսվարող սուբյեկտի լուծարմանը (պետական հաշվառումից հանելուն):

141. Վերոգրյալ իրավական կարգավորման համաձայն՝ շուկայում գերիշխող դիրք ունենալու փաստը հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ: Այդ որոշումից հետո տնտեսվարող սուբյեկտը կաշկանդված է որոշակի պարտականություններով, օրինակ՝ պարտավոր է Հանձնաժողովին տրամադրել տեղեկատվություն, ստանալ թույլտվություն և այլն:

142. Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված են այն գործողությունների արգելքը, որոնց իրականացման դեպքում հանձնաժողովի որոշմամբ շուկայում գերիշխող դիրք գրավող սուբյեկտները կենթարկվեն պատասխանատվության:
143. Այսինքն, **հանձնաժողովի որոշումից հետո տնտեսվարող սուբյեկտի իրավունքների նկատմամբ տեղի է ունենում միջամտություն**, և հենց դա էլ համարվում է արտաքին ներգործություն է: Վարչարարության հիմունքների մասին օրենքի 53-րդ հոդվածի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:
144. Նույն հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:
145. **Վերոգրյալ իրավական վերլուծությունները և համադրությունները հիմնավորում են Հանձնաժողովի այն իրավական կարգավիճակը և լիազորությունը, որի համաձայն՝ ուսումնասիրությունը իրավական հետևանքներ առաջացնելու մտադրությամբ իրականացվող գործողություն է, որի արդյունքում կայացվում է կամ միջամտող վարչական ակտ, կամ ավարտվում է ուսումնասիրություն իրականացվող շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների համար բարենպաստ կարգով:**
146. Սույն ուսումնասիրության մեջ ուշադրություն է դարձվել նաև այն հանգամանքին, որ դատարանների կողմից կայացված դատական ակտերում նկատվում է դատական ատյանների կողմից ակնհայտ անհավասար մոտեցումները տնտեսական մրցակցության պաշտպանության իրավահարաբերությանը: Այդ մոտեցումը դրսևորվել է հատկապես կայացված դատական գործերում մասնավոր անձանց օգտին գրեթե վճիռ չկայացնելով:
147. Ուսումնասիրելով datalex.am դատական ակտերի որոնման համակարգը պարզ կդառնա, որ 2012-2016թթ կայացված ըստ էության լուծով 30 դատական գործերով, որտեղ հայցվոր սուբյեկտ հանդիսացել է տնտեսվարող սուբյեկտը, իսկ պատասխանողը Հանձնաժողովը, կայացվել է վճիռ հօգուտ վարչական մարմնի՝ հանձնաժողովի 29 դատական գործով և ընդամենը մեկ գործով է կայացվել վճիռ հօգուտ տնտեսվարող սուբյեկտի:
148. Ավելին, հաղթանակած այդ մեկ գործը դեռևս ուժի մեջ չի մտել և գտնվում է վերաքննիչ դատարանում, իսկ ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, (4

գործերով վարչական դատարանը կայացրել հօգուտ տնտեսվարող սուբյեկտի, մինչդեռ վերաքննիչ վարչական դատարանը բեկանել է դատական ակտը և փոփոխել է հօգուտ վարչական մարմնի), սույն դեպքում, դատական պրակտիկայից ելնելով, կարելի է եզրակացնել, որ դատարանը կկայացնի հօգուտ վարչական մարմնի որոշում բեկանելով այդ մեկ հաղթանակած գործը:

6. ՕՐԵՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ

149. Ուսումնասիրություն իրականացնողների կողմից իրականացվել է տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ հարցում Հանձնաժողով: Հարցմամբ խնդրվել է տրամադրել 2013 թվականից մինչ այժմ կայացված որոշումները, որպեսզի դրա հիման վրա իրականացվի պրակտիկայի ուսումնասիրություն:
150. Սակայն Հանձնաժողովը 04.04.2016 թվականին ուղարկված գրությամբ նշել է, որ Հանձնաժողովը 2013 թվականի հունվարի 1-ից մինչև այժմ ընդունել է Օրենքի հնարավոր կամ փաստացի խախտումների վերաբերյալ շուրջ 1238 որոշում: Վերոնշյալ բոլոր որոշումները, ըստ Հանձնաժողովի պարունակում են օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկություններ և Հանձնաժողովը չի կարող տրամադրել վերոնշյալ բոլոր որոշումների պատճենները: Հանձնաժողովը նաև տեղեկացրել է, որ այդ որոշումների վերաբերյալ ներկայացվում է տարեկան զեկույցներում և անձինք կարող են ստանալ տեղեկատվություն այդ աղբյուրից:
151. Փաստորեն, Հանձնաժողովը իր գործողությամբ տեղադրում էր պաշտոնական կայքում կայացվող որոշումները մինչև 2013 թվականը, դրանից հետո ընկած ժամանակաշրջանում այլևս տեղեկություն չի նշվում որոշումների վերաբերյալ: Հանձնաժողովը որևէ կերպ չի հիմնավորել այդ վարքագիծը, եթե իսկապես այդ որոշումներով օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկատվություն առկա է, ապա մինչև 2013 թվականը պետք է, որ նույնպես առկա լինի: Ստացվում է, որ Հանձնաժողովը մինչև 2013 թվականը խախտել է օրենքը և այդ խախտումը շարունակվում է մինչև այժմ, քանի որ միջամտությունը այժմ առկա է՝ որոշումները այժմ հրապարակված են: Հանձնաժողովը նաև չի նշում, թե հատկապես որ օրենքով են այդ որոշումները գաղտնիք համարվում:
152. Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, ներկայացնում ենք 2012 թվականին կայացված որոշումների բովանդակության վերաբերյալ տեղեկատվություն: Այդ որոշումները սկզբնապես կբաժանվեն համապատասխան թեմատիկայի և ոլորտի, իսկ այնուհետև կներկայացվի այդ որոշումների իրավական կարգավիճակը:
153. Այսպիսով, ուսումնասիրելով Հանձնաժողովի պաշտոնական http://www.competition.am/ կայքը, պարզ է դառնում, որ այնտեղ զետեղված են 2012 թվականին կայացված որոշումները՝ 44 գործ: Որոշումները Հանձնաժողովի կողմից

ընդունվում են ամսական կտրվածքով՝ դեկտեմբեր, օգոստոս, հուլիս, հունիս, մայիս, ապրիլ, մարտ, փետրվար, հունվար ամիսներին:

154. Հանձնաժողովը իր գործողությունները իրականացնում է թեմատիկ ոլորտներում, այսինքն՝ ընտրում է որևէ իրավահարաբերություն և իրականացնում է ուսումնասիրություններ և ստուգումներ: Ընդ որում, այդ ժամանակաշրջանում այլ ոլորտի գործունեությամբ չի զբաղվում:

155. Օրինակ. դեկտեմբեր ամսին կայացված որոշումները, թվով 18 գործ կայացվել են այն տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու մասով, որոնք իրենց արտադրանքների փաթեթավորման մեջ սպառիչ չեն նշում ապրանքի բաղադրությունը: Օրինակ. «Բարի արագիլ» ՍՊԸ-ն ենթարկվել է պատասխանատվության այն վարքագծի համար, որի համաձայն երշիկեղենում օգտագործել է ալյուր, մինչդեռ դրա մասին ապրանքի փաթեթավորման մեջ ոչինչ նշված չէ: Հանձնաժողովը գտել է, որ այդ վարքագիծը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), որակել որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն: Տվյալ գործողության համար ընկերությունները տուգանվել են նախորդ տարվա հասույթի մեկ տոկոսի չափով:

156. Կարելի է փաստել, որ դեկտեմբեր ամսվա վարույթի հիմնական թեմատիկան տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց ապրանքների փաթեթավորման մեջ սպառիչ տեղեկատվություն նշելն էր: Նաև պետք է արձանագրել, որ այդպիսի վարքագիծը հիմնականում դրսևորվում է, երբ վարույթները հարուցվում են սեփական նախաձեռնությամբ:

Հանձնաժողովը 2012 թվականին կայացված որոշումներում.

- 18 գործով կայացրել է պատասխանատվության ենթարկելու մասին որոշում ապրանքի փաթեթավորման համար, դիտարկելով այն հասարակությանը մոլորեցում, անբարեխիղճ մրցակցություն:
- 6 գործով Հանձնաժողովը կայացրել է որոշում ապրանքային նշանների հետ կապված գործերով (նույն ոլորտին վերաբերվող):
- 16 գործով տնտեսվարող սուբյեկտներին ենթարկել է պատասխանատվության այն հիմքով, որ սահմանված ժամկետում չի տրամադրվել տեղեկատվություն:
- 1 գործով ճանաչել է սուբյեկտին շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող:
- 4 գործով ճանաչել է սուբյեկտներին անձանց խումբ:

157. Ուսումնասիրելով դեկտեմբեր ամսվա իրականացված վարչարարությունը, պարզ է դառնում, որ երկրորդ կիսամյակում հանձնաժողովի գործունեությունը ունեցել է խիստ բևեռացում և առնչվել է միայն մեկ ոլորտին՝ ապրանքների փաթեթավորմանը:

158. Այդ ոլորտի վարչարարությունը Հանձնաժողովը իրականացրել է բացառապես իր հայեցողությամբ ընտրված կազմակերպությունների դեմ, այդպիսով պահանջելով ընկերություններից տեղեկատվություն մթերքների և մթերքի փաթեթավորման վերաբերյալ: Արդյունքում Հանձնաժողովը պատասխանատվության է ենթարկել ընկերություններին հասույթի մեկ տոկոսի չափով, իսկ որպես պատասխանատվություն ենթարկելու համաչափության ստուգում հաշվի է առել այն հանգամանքը, որ «Հանձնաժողովը Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս հաշվի է առնում այն հանգամանքը, որ իրավախախտումը կատարվել է սննդամթերքի արտադրության և իրացման ոլորտում, ինչպես նաև այն, որ իրավախախտումը բացասական ազդեցություն է ունեցել սպառողների վրա»:
159. Ինչպես երևում է, Հանձնաժողովի վերոգրյալ վարչարարությունը, որը կարգավորվում է Օրենքի 5-րդ գլխով, վերաբերվում է մի իրավահարաբերության, որտեղ առկա է շատ տարբեր գործնական կիրառություն և այն կիրառվում է շատ հարաբերական:
160. Օրենքի 5-րդ գլխում առկա իրավախախտումներից մեծամասնությունը և իրավակիրառ պրակտիկայում գործող կարգավորումները վերաբերվում են սպառողների իրավունքների պաշտպանությանը: Այստեղ առաջանում է հարցադրում, արդյո՞ք սպառողների իրավունքների պաշտպանությունը և մրցակցության պաշտպանությունը կարող են կարգավորվել մեկ մարմնի կողմից: Սակայն անվիճելի է այն փաստը, որը սկզբնապես անհրաժեշտ է կարգավորել գլխավոր խնդիրը, այն է՝ իրավակիրառ պրակտիկայի հարաբերական կիրառությունը և լայն մեկնաբանությունները:
161. Հանձնաժողովը իրականացնելով սպառողների իրավունքների պաշտպանություն պետք է հաշվի առնի տնտեսական մրցակցության պաշտպանության սկզբունքները և տարրերը, այլապես Հանձնաժողովի երկբևեռ գործունեությունը կարող է հակասական պրակտիկայի առաջացման վտանգ ստեղծել:
162. Հանձնաժողովը պետք է ուշադրություն դարձնի տնտեսվարող սուբյեկտների հետևյալ մրցակցության ֆունկցիաներին.

Կարգավորման ֆունկցիա: Որպեսզի գործարարը գոյատևի մրցապայքարում, նա պետք է առաջարկի արտադրանք, որը կնախընտրի սպառողը: Այստեղից էլ արտադրության գործոնները գնի ազդեցության տակ ուղղվում են այն ճյուղեր, որտեղ նրանց նկատմամբ պահանջարկը մեծ է:

Խթանման ֆունկցիա: Ձեռնարկատիրոջ համար մրցակցությունը նշանակում է միաժամանակ և հնարավորություն և ռիսկ:

Բաշխման ֆունկցիա: Մրցակցությունը ոչ միայն ներառում է ավելի բարձր արտադրողականության խթաններ, այլև թույլ է տալիս բաշխել շահույթը

ձեռնարկությունների և տնային տնտեսությունների միջև իրենց կատարած ներդրումներին համապատասխան:

Վերահսկման ֆունկցիա: Մրցակցությունը սահմանափակում և վերահսկում է յուրաքանչյուր ձեռնարկության տնտեսական ուժը: Օրինակ՝ մենատերը կարող է գին սահմանել: Միևնույն ժամանակ մրցակցությունը սպառողին մի քանի վաճառողների միջև ընտրության հնարավորություն է տալիս: Ինչքան կատարյալ է մրցակցությունը, այնքան արդարացի է գինը:

163. Ինչպես նշվեց վերոգրյալում, Հանձնաժողովը 16 անգամ կիրառել է պատասխանատվության միջոց այն արարքի համար, որ տնտեսվարող սուբյեկտները չեն ներկայացրել տեղեկատվություն, այսինքն՝ մեկ տարում կիրառված պատասխանատվության միջոցներից 30 տոկոսը:
164. Այստեղ գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ վարչական մարմինը իր գործունեության ընթացքում կարող է հայցվող տեղեկատվությունը ստանալ պետական մարմիններից, այդ թվում ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, մաքսային և հարկային մարմիններից, վիճակագրական ծառայություններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և այլն: Այնինչ Հանձնաժողովը ընտրել է հնարավոր իրավաչափ միջոցներից միայն մեկը և համատարած կիրառում է այն, իր կայացրած որոշումների 30 տոկոս կայացնելով այդ իրավահարաբերությունում, որի հիման վրա տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տեղի է ունենում միջամտություն, սեփականազրկում:
165. Հանձնաժողովի կողմից տեղեկատվություն պահանջելու և չներկայացվելու պարագայում պատասխանատվության ենթարկելու անսահմանափակ լիազորությունները կարող են միջամտել տնտեսվարող սուբյեկտների տնտեսական ազատությանը, քանի որ առանց կանոնակարգման այդ հարաբերությունը կարող է դառնալ գործիք ցանկացած տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ սահմանափակում մտցնելու համար:
166. Տեղեկատվություն պահանջելու լիազորությունը պետք է հստակ կանոնակարգվի, արձանագրվի կոնկրետ վարչարարություն իրականացնելու հստակ ժամկետներ, տնտեսվարող սուբյեկտներին ընտրելու Հանձնաժողովի լիազորության սահմանումը պետք է այնքան հստակ լինի, որպեսզի կանխատեսվի, թե հատկապես որ տնտեսվարող սուբյեկտները կարող են լինել Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի մասնակի կամ տեղեկատվություն տրամադրվող: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտի համար պետք է հնարավորինս կանխատեսելի լինի Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչարարությունը:
167. Հանձնաժողովի կողմից վերոգրյալ վարքագիծը ունի նաև իրավական և փաստացի հիմքերը, Հանձնաժողովը չունի բավարար քննություն իրականացնելու լիազորություն և հնարավորություն, որից էլ բխում է, որ ստիպված է

տեղեկատվություն հայցելու համար դիմել սուբյեկտներին: Քննություն իրականացնելու լիազորության բացակայության մասին նաև կարելի է ընդունել Օրենքի վերլուծությունից, որտեղ 5-րդ հոդվածում արդեն իսկ արձանագրվել է ընթացակարգային կանոն, որի համաձայն որոշակի փաստերի առկայության դեպքում խախտումը համարվում է ապացուցված: Այդ կանոնի նպատակը, ըստ երևույթին, Հանձնաժողովին ավելի լայն լիազորություններ տալուց ձեռնպահ լինելու մտադրությունն է, եթե նպատակը կա, գործընթացը կա, սակայն չկա բավարար լիազորություն գործելու, ապա պետք է օրենքով նախատեսվի ապացուցման չափանիշներ, որպեսզի Հանձնաժողովի գործունեությունը ձևական բնույթ չկրի:

168. Որպես վերոգրյալին լրացում կարելի է նաև ավելացնել ներքոգրյալ խնդիրները, որոնք նույնպես խթանում են Հանձնաժողովի կողմից որդեգրած գործունեության ոչ բարձր արդյունավետությանը:

169. Հայաստանը չունի իրավական և տնտեսական քաղաքականության համապարփակ և ուղղորդված փաստաթուղթ: Համաձայն Օրենքի Հանձնաժողովը մասնակցում է տնտեսական մրցակցության զարգացմանը և այդ բնագավառում պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը և դրանց սահմանված կարգով ներկայացմանը: Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի հիման վրա կառավարության որոշմամբ Էկոնոմիայի նախարարությունը հանդիսանում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցությունը գնահատող մարմին: Այս ամենով հանդերձ, մեր երկիրն այսօր չունի իրավա-տնտեսական քաղաքականություն, որի իրականացմանը կլծվեին համապատասխան մարմինները:

170. Հայաստանում տնտեսության կենտրոնացման գործընթացները երբևէ չեն կանոնակարգվել հակամենաշնորհային օրենսդրությամբ նախատեսված մեխանիզմներով, ինչի հետևանքով ձևավորվել է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները: Սա էլ իր հերթին նպաստել և նպաստում է սոցիալական բևեռացմանը: ՀՀ-ում հարստության կենտրոնացվածության աստիճանը 28,8 անգամ մեծ է, քան ԱՄՆ-ում, 14 անգամ՝ քան Ռուսաստանում, և շուրջ 2 անգամ՝ քան Ուկրաինայում: Այսօր ակնհայտ է, որ շուկաների կենտրոնացվածության, մրցակցային իրավիճակի և դրանց արդյունքում հասարակական վնասի առումով Հայաստանում վիճակն ավելի բարվոք չէ, քան հակամենաշնորհային օրենսդրության կայացման սկզբին՝ 2000 թվականին :

171. Հայաստանում ձևավորված և գործող մենաշնորհները երբևէ նպատակային կերպով չեն զբաղվել գիտատեխնիկական և նորարարական մշակումներով, բարձր տեխնոլոգիաների ներդրմամբ: Ավելին՝ դրանց առկայությունն ու հակամրցակցային գործունեությունն ըստ ամենայնի արգելակել են երկրի

գիտատեխնիկական և նորարարական ներուժի իրացումն ու աշխատանքի արտադրողականության աճը:

172. Հայաստանի տնտեսությունում առկա ստվերը միայն մեր երկրին բնորոշ երևույթ չէ: Սակայն Հայաստանում իրականացված տնտեսական, դրամավարկային և հակամրցակցային քաղաքականությունները չեն չեզոքացրել մենաշնորհների առաջացումը: Ստվերը աղավաղում է տնտեսության և առանձին շուկաների իրական պատկերը, ոչ ճիշտ որոշումների կայացման մշտական վտանգ է ստեղծում, պաշտոնական վիճակագրության և հարկային հաշվետվությունների հիման վրա տրվում են որակումներ ու հաճախ ստացվում է, որ ստվերում գործողը շահում է՝ ունենալով ակնհայտ մրցակցային առավելություն:
173. Հանձնաժողովի կողմից Օրենքի հիման վրա տվյալ լիազորությունների իրականացման արդյունքում հնարավոր է նպաստել նպատակի իրականացմանը: Սակայն այդ լիազորությունները պետք է իրականացվեն համաչափ և ոչ կամայական, օրենքի տառին համապատասխան: Պետք է երաշխավորվի սուբյեկտի հիմնական իրավունքները և ազատությունները: Վարչարարությունը պետք է լինի օրինական:
174. Հանձնաժողովի կողմից իրականացվող գործողությունների և վարչական վարույթի ժամկետները պետք է հստակ կանոնակարգվեն, որպեսզի բացառվեն իրավունքի չարաշահումը: Իրավական բացի պայմաններում Հանձնաժողովը իրավունք ունի մեկ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ իրականացնել անսահմանափակ ժամկետով ուսումնասիրություն, վարչական վարույթը Հանձնաժողովի կողմից կարող է կասեցվել և փաստացի այդ Հանձնաժողովի վարչարարությունը տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ առաջացնել լարվածություն, սահմանափակել տնտեսական ազատությունը և առաջացնել այլ խնդիրներ:
175. Ինչպես վերոգրյալում նշվեց, իրավաչափ է Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչարարության նպատակը, սակայն նպատակին հասնելու միջոցները պետք է համապատասխանեն համաչափության սկզբունքին և առավելագույնս ապահովվի սուբյեկտների իրավունքները և ազատությունները:
176. Հանձնաժողովի ստեղծումը, ինչպես նաև Օրենքի ընդունումը հիմնականում միտված էր ստվերային տնտեսության բացահայտման և հարկային դաշտ տեղափոխելու համար: Քանի որ Հայաստանում տնտեսության կենտրոնացումից ստեղծվել է մի իրավիճակ, որտեղ հիմնական ապրանքների իրացումը կատարում են մի քանի կազմակերպություններ, որոնց նկատմամբ վերահսկողությունը Հանձնաժողովի կողմից կբացահայտեր Հայաստանում իրական տնտեսական դրությունը:
177. Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) «Կովկաս եւ Կենտրոնական Ասիա. Տարածաշրջանային տնտեսական հեռանկարներ» անվանմամբ զեկույց է

հրապարակել, ըստ որի՝ Հայաստանի տնտեսության ստվերայնության աստիճանը դեռևս 2008 թվականին կատարված ուսումնասիրություններով ամենաբարձրերից է ոչ միայն հարավկովկասյան տարածաշրջանում, այլև արևելաեվրոպական և կենտրոնասիական երկրների շարքում: Ըստ զեկույցի՝ Հայաստանի ստվերային տնտեսությունը կազմում է երկրի համախառն ներքին արդյունքի ավելի քան 35 տոկոսը:

178. Եթե Հանձնաժողովի կողմից վերահսկողություն սահմանվի այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք իրենց գործունեությամբ Հայաստանում իրականացնում են գերիշխող դիրք, ապա կբացահայտվի Հայաստանի տնտեսության իրական թվերը, որն էլ Հայաստանին կդարձնի ավելի ցանկալի, միջազգային այլ առևտրային կազմակերպությունների համար: Այդ կազմակերպությունների ներդրումները և մուտքը շուկա արդեն իսկ կստիպի շուկայում գործող կազմակերպություններին թուլանալ, կորցնել գերիշխանությունը:

179. Հանձնաժողովը իր նպատակների իրականացման մեջ ընտրել է մի ճանապարհ, որը միտված է բնականաբար իր նպատակների իրականացմանը, սակայն տեղեկատվություն պահանջելու և ապրանքի սխալ փաթեթավորման հետևանքով մանր և միջին ձեռնարկատերերին պատասխանատվության ենթարկելը պետք է ենթարկվի քննության համաչափության, կամայականության և օրինականության սկզբունքների հետ և արդյո՞ք այդ ճանապարհը տանում է դեպի նպատակը ավելի արդյունավետ, քան մյուս արդեն իսկ միջազգային փորձում առկա ճանապարհները:

7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ 2001-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

180. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում կայացրել է բազմաթիվ որոշումներ, որոնց վերաբերյալ հասանելի է միայն 2001 թվականից մինչև 2013 թվականը ընկած ժամանակաշրջանում կայացված որոշումների բաշխվածությունը, որը կներկայացվի ստորև.

Հանձնաժողովի կողմից կայացված որոշումների տեսակները	2001- 2007թթ.	2008	2009	2010	2011	2012	ընդհանուր
	7	2	-	-	3	-	12

Գերիշխող կամ մենաշնորհ դիրքի չարաշահում							
Հակամրցակցային համաձայնություն	4	2	1	-	-	1	8
Միաձուլում	1	3	1	-	-	1	6
Անբարեխիղճ մրցակցություն	85	8	5	51	59	24	232
Տեղեկատվության չտրամադրում կամ թերի տրամադրում	125	11	16	52	116	16	336

181. Վերոգրյալից պարզ է դառնում, որ պատասխանատվության ենթարկող 594 որոշումներից 568-ը, այսինքն՝ ծանրակշիռ մեծամասնությունը, Հանձնաժողովը կայացրել է տեղեկատվություն չտրամադրելու կամ սպառողների իրավունքների պաշտպանության իրականացման համար: Բացահայտ է, որ տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակների իրականացումը անհնար է հասնել միայն տեղեկատվություն չտրամադրելու համար պատասխանատվության ենթարկելով և սպառողների իրավունքների պաշտպանությամբ, որն իր հերթին քաղաքացիաիրավական խնդիր է և ավելի քիչ է հակված վարչարարությանը:
182. Մեր կողմից իրականացվել է տեղեկատվության հարցում Հանձնաժողով, որտեղ խնդրել ենք Հանձնաժողովից տրամադրել Հանձնաժողովի կողմից 2013-2015թթ կայացված որոշումները, այնինչ Հանձնաժողովը փաստացի մերժել է հարցումը, նշելով, որ պահանջվող տեղեկատվության որոշ մասը զետեղվում է տարեկան հաշվետվության մեջ:
183. Հանձնաժողովի կողմից հրապարակվող տարեկան հաշվետվության ուսումնասիրությունից հնարավորություն եղավ ստանալ ներքոգրյալ տվյալները, որոնցից 2013 թվականին և 2015 թվականին կայացված ընդհանուր որոշումները չեն բացահայտվել, այլ սահմանված է ընդհանուր չափով:

Հանձնաժողովի կողմից կայացված որոշումների տեսակները	2013	2014	2015

Տեղեկատվություն չտրամադրելու համար նախատեսված պատասխանատվություն և այլն	-	464	
Չհայտարարագրված կենտրոնացում	-	88	
Գերիշխող/մենաշնորհ դիրքի չարաշահում	-	3	
Անբարեխիղճ մրցակցություն	-	38	
Ընդհանուր	417 որոշում	593	95 որոշում

184. ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք: 2. Տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: 3. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաև տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:
185. Հանձնաժողովը հանդիսանում է պետական մարմին և Սահմանադրության պարտականությամբ կրում է թափանցիկ աշխատելու պարտավորություն: Հասարակությունը իրավունք ունի ստանալ տեղեկատվություն, որը վերաբերվում է իր իրավունքներին և ազատություններին: Չէ որ, Հանձնաժողովը իր խնդիր-նպատակ է նաև հռչակել սպառողների իրավունքների պաշտպանությունը: Սպառողը, որի իրավունքը Հանձնաժողովը պաշտպանում է, իրավունք ունի տիրապետել այն տեղեկատվությանը, որը գոյանում է պետական մարմնի կողմից իր իրավունքների պաշտպանության ժամանակաշրջանում:
186. Վերոգրյալը հրամայական է դառնում հատկապես այն ժամանակ, երբ Հանձնաժողովը որոշակի վարչական վարույթների ընթացքում եզրակացության է գալիս, որ այս կամ այն կազմակերպության հակամրցակցային և հակաիրավական գործողությունների արդյունքում խախտվել է սպառողների իրավունքները և օրինական շահերը: Եթե պաշտպանում ենք անձի խախտված իրավունքը և այն վերականգնում ենք կամ բացառում հետագա խախտումից, այդ անձը իրավունք ունի այդ տեղեկատվությունը տիրապետելու, քանի որ այդ տեղեկատվությունը գուցեն հնարավորություն տա անձին կանխարգելել իր իրավունքի խախտումը ապագայում, կամ կրկին խախտման դեպքում դրա մասին հայտնել Հանձնաժողովին:

187. ՀՀ Սահմանադրությունն, ի մասնավորի 42-րդ և 51-րդ հոդվածների, իր իրավազորության ներքո գտնվող անձանց, երաշխավորում է տեղեկատվության ազատության և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները:

188. «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» աշխատության՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի դոկտրինալ մեկնաբանության մեջ, ի թիվս այլոց, գրված է, որ.

«Տեղեկատվության ազատության իրավունքը պետության վրա դնում է ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ պարտականություններ: Պետական կառույցները ներազդում են տեղեկույթի վրա, նրա հրապարակայնության, մատչելիության, տարածման և սպառողին փոխանցման գործընթացի վրա: Տեղեկույթի մենաշնորհային տնօրինումը, ինչը բնութագրական է ամենից առաջ հակաժողովրդավարական հասարակությանը, արգելք է մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Բոլոր ժամանակներում իշխանության կարևորագույն սոցիալական գործառույթն է եղել տեղեկույթի չափավորումը, դրա հոգեբանական փաթեթավորումը: Դրա հիման վրա է կառուցված հասարակական կարծիքի մանիպուլյացիայի կառուցակարգը: Ամենահայտնի և հասարակ ձևը, որով իշխանությունը վերահսկում է տեղեկատվական հոսքերը, համարվում է գրաքննությունը (ցենզուրա): Այս դեպքում պետությունը պատասխանատու չինովնիկների օգնությամբ կառավարում է տեղեկատվական նյութի բովանդակությունը: Տեղեկույթի պետական մենաշնորհը և գրաքննությունը բումերանգի պես խփում են հենց պետությանը՝ տանելով հասարակությանը տնտեսական, քաղաքական և իրավական փակուղի: Չէ՞ որ տեղեկույթը ժողովուրդ-պետություն ուղղակի կապի միջոցն է: Ուղղակի կապի կամայական չափաբաժնավորումը միայն առաջին հայացքից է շահավետ կառավարման սուբյեկտի համար: Ի վերջո, այն հանգեցնում է հետադարձ տեղեկույթի վնասակարությանը, զտվածությանը, կողմնակալությանը: Իսկ դա անխուսափելիորեն կառավարման կարևորագույն՝ որոշումների ընդունման փուլում հանգեցնում է սխալների: Տեղեկատվությունը՝ տեղեկություններ (հաղորդումներ, տվյալներ) են՝ անկախ դրանց ներկայացման ձևից: Ի տարբերություն անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության, որի հավաքումը, օգտագործումը և տարածումը՝ առանց նրա համաձայնության, Սահմանադրությանը համապատասխան չեն թույլատրվում, հանրային կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը, որպես կանոն, պետք է լինի բաց և հանրամատչելի:

189. Պետական մարմինները, այդ թվում Հանձնաժողովը, պարտավոր են ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը: Անձը, ով

ցանկանում է անարգել ստանալ այդպիսի տեղեկատվություն, պարտավոր չէ հիմնավորել դրա ստանալը: Բացառություն է կազմում սահմանափակ մատչելիությամբ տեղեկատվությունը: Ֆիզիկական և իրավաբանական անձանց համար պետական տեղեկատվական աղբյուրների մատչելիությունը պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև տնտեսության, բնապահպանության և հասարակական կյանքի մյուս ոլորտների վիճակի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման հիմք է հանդիսանում»:

190. Տեղեկատվության ազատության իրավունքը երաշխավորված է նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Այս իրավունքը բացարձակ չէ, սակայն իրավաչափ է համարվում այդ իրավունքի սահմանափակումը՝ «միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»՝ ինչպես, որ դա երաշխավորված է ՀՀ Սահմանադրություն 43-րդ հոդվածով:
191. Օրենսդրորեն երաշխավորված է տեղեկատվության ազատության իրավունքի իրացումը: Մասնավորապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, ի թիվս այլոց, սահմանված է տեղեկատվություն եզրույթը, սահմանված են դրա ստացման ընթացակարգերը:
192. Հայաստանի քաղաքացիական հասարակությունը բաց հասարակություն է: Նրանում հռչակված և պետության կողմից երաշխավորված են հրապարակայնությունը, անձի կողմից **<u>տեղեկատվություն ստանալու իրավունքը</u>**: Պետական գործառույթներով օժտված անձինք պարտավոր են ապահովել իրենց գործունեության, այդ թվում անձանց իրավունքների սահմանափակման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը:
193. Հանձնաժողովը իր պաշտոնական կայքում (www.competition.am) հրապարակել է 2001-2013 թվականների ընթացքում կայացված որոշումները, սակայն 2013 թվականից հետո որոշումները չեն հրապարակվում: Այդ վարքագիծը հիմնավորվում է այն փաստարկով, որ այդ որոշումներում առկա է օրենքով պահպանվող գաղտնիք, սակայն ինչ գաղտնիքի մասին է խոսքը, կամ այդ գաղտնիքը որ օրենքով է պաշտպանված չի նշվում:
194. Հանձնաժողովը նաև չի բացահայտում նաև այն հարցադրումը, թե ինչու՞ է հրապարկվել մինչև 2013թ կայացված որոշումները, այնինչ մնացած

ժամանակաշրջանը չի հրապարակվել, արդյո՞ք մինչև 2013թ կայացված որոշումներում առկա չեն օրենքով պահպանվող գաղտնիքներ:

195. Հանձնաժողովը իրավասու էր քննարկել այդ որոշումների հրապարակման հարցը օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկատվությունները տեխնիկական միջոցներով տեսանելի չդարձնելով: Հանձնաժողովը պետք է ելնի այն սկզբունքից, որ պետական մարմնի գործառույթների հաշվետու և թափանցիկ աշխատանքը խիստ փոխկապակցված է իրավական պետության հետ, այսինքն, որպես կանոն պետք է տեղեկույթի հրապարակումը լինի ընդհանուր կանոն, իսկ չհրապարակումը բացառություն ընդհանուր կանոնից:

8. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

196. Հանձնաժողովը հանդիսանալով պետական մարմին սահմանափակված է ֆիզիկական և իրավաբանական անձանց հիմնական իրավունքներով և ազատություններով (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված և 74-րդ հոդված):

197. Ինչպես վերոգրյալում նշվեց՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները իրացնելով անձինք սահամանափակված են որոշակի կանոններով, որոնք սահմանվում է օրենսդրի կողմից, իսկ այդ կանոնների կիրառումը և պահպանման վերահսկողությունը իրականացնում է պետական մարմնի կողմից օրենքով սահմանված լիազորությունների և կարգի համաձայն: Ընդ որում, օրենսդիրը պատվիրակել է այդ մարմնին իր կողմից ընդունված իրավական ակտերի խախտման դեպքում կիրառել իրավունքի սահմանափակումներ, սակայն այդ սահմանափակումները պետք է համապատասխանեն օրենքին և դուրս չգան այդ սահմանափակումները կարգավորող իրավական ակտերից:

198. Ավելին, այդ սահմանափակումները պետք է իրականցվեն որոշակի ընթացակարգով, որպեսզի այդ անձանց իրավունքներին և ազատություններին անհարկի և ոչ իրավաչափ վնաս չհասցվեն և չսահմանափակվեն: Այդ կանոնը ունի իր իրավական բովանդակությունը՝ անձինք օգտվում են մի շարք իրավունքներից (թարգմանիչ ունենալու, որակյալ իրավաբանական օգնություն ստանալու, ապացույց ներկայացնելու, որոշակի դեպքերում հայցելու, որպեսզի անձը համարվի անմեղ, քանի չեն ապացուցել հակառակը և այլն):

199. Պետական մարմնի այդ գործընթացը անվանվում է վարչարարություն, որի իրավական բովանդակությունը բացահայտված է Վարչարարության հիմունքների մասին օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ 2) ***վարչարարություն*** ՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև

գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

200. Վարչարարության հիմունքների մասին օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

201. Սակայն Օրենսդիրը հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական մարմինների որոշ լիազորություններ և գործողություններ տարածված են տարբեր իրավական ակտերի միջև Վարչարարության հիմունքների մասին օրենքի 2-րդ հոդվածում նշել է, որ Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի միջազգային պայմանագրերով:

202. Սակայն պետք է հաշվի առնել, որ վարչարարության հիմնական կանոնները և սկզբունքները գտնվում են Վարչարարության հիմունքների մասին օրենքում, իսկ որոշակի առանձնահատկություններ կարող են սահմանվել հատուկ օրենքներով: Այսինքն՝ այլ օրենքներով ուղղակիորեն չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Վարչարարության հիմունքների մասին օրենքով սահմանված կարգով:

203. Վերոգրյալը հաստատում է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշմամբ՝ ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում Հանձնաժողովի չհրապարակվող որոշումների ուժի մեջ մտնելու առանձնահատկությունը, **հետևաբար դրա այդ հարաբերության նկատմամբ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի կիրառման արդյունքում: 3-2031 (ՏԴ)»:**

204. Սույն դեպքում Հանձնաժողովը հանդիսանալով պետական մարմին, պարտավոր է վարչարարության իրականացման ընթացքում ղեկավարվել վարչարարությունը կարգավորող իրավական ակտերով, այն է՝ Վարչարարության հիմունքների մասին օրենքով, իսկ առանձնահատկությունների դեպքում առանձնահատկությունները սահմանող իրավական ակտերով:

205. Կարող ենք արձանագրել, որ Օրենքը, որպես վարչարարության կանոններ հիմնականում սահմանում է 30-րդ և 31-րդ հոդվածներով, որոնք վերաբերվում են Հանձնաժողովի աշխատանքների իրականացման կարգին ու հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների, ինչպես նաև զգուշացում տալու իրավասությանը և կիրառման կարգին: Որոշակի լիազորություններ սահմանված են

«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (հսկիչ գնում և այլն):

206. Վերոգրյալի հաշվառմամբ, կարող ենք եզրակացնել, որ մնացած բոլոր դեպքերում Հանձնաժողովը պարտավոր է վարչարարությունը իրականացնել Վարչարարության հիմունքների մասին օրենքով սահմանված կարգով:

207. Գտնում ենք, որ իրավական հիմնավորում չունի այն եզրակացությունը, որ այն դեպքերում, երբ Օրենքով կոնկրետ իրավահարաբերությունում չի լուծում այս կամ այն խնդիրը, ապա այդ խնդիրը ենթակա չէ լուծման Վարչարարության հիմունքների մասին օրենքով և այդ խնդրի լուծման ճանապարհը կարող է որոշել հանձնաժողովը առանց կոնկրետ լիազորության և կանոնների:

208. Օրինակ, եթե կոնկրետ իրավահարաբերության մեջ առկա է որոշակի գործողություն իրականացնելու կանոն, սակայն Օրենքով այդ գործողությունը չի կանոնակարգվում կոնկրետ իրականացման ընթացակարգով և ժամկետներում, չի կարող նշանակել, որ այդ գործողությունը չունի ընթացակարգ կամ ժամկետներ և Հանձնաժողովը իրավասու է ընտրել իրեն հարմար ընթացակարգը և չսահմանափակվել ժամկետներով:

209. Հայաստանը իրավական պետություն է և Հանձնաժողովի գործողությունները չեն կարող սահմանափակված չլինել ժամկետներով կամ կանոններով: Քաղաքացին իրավունք ունի որոշակի պատկերացում կազմել վարչական մարմնի վարքագծից և հետագա գործողություններից, որոնց իրականացման կարգը սահմանված կլինի օրենքով:

210. ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածը հռչակում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ, իսկ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

211. Այսպիսով, Հանձնաժողովի վարքագիծը և լիազորությունները կամ սահմանված են Սահմանադրությամբ և օրենքով, կամ այստեղ առկա իրավական որոշակիության խնդիր՝ այն սուբյեկտները, ում իրավունքները հանձնաժողովը սահմանափակում է, պետք է կարողանան տիրապետել (տեղեկանալ) հանձնաժողովի լիազորություններին, դրանց հիմքերին, ծավալներին, դրանք պետք է անձի համար լինեն բավարար որոշակի, որպեսզի անձը այդ իրավունքի սահմանափակումից կարողանա հասկանա արդյո՞ք իր իրավունքը իրավաչափորեն են

սահմանափակում թե ոչ: Այսինքն՝ այդ սահմանափակումներում պետք է ներառված լինեն որոշակի երաշխիքներ, որոնք, ընդ որում, առկա են Վարչարարության հիմունքների մասին օրենքում:

9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԽԱԽՏՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

1. Ապացույց և ապացույցի չափանիշ

212. Առանձին ուսումնասիրության առարկա է, թե ինչպես է Հանձնաժողովը որոշում խախտման առկայությունը, ապացույցի գնահատման ինչ եղանակներ, ապացույցի ինչ չափանիշ է կիրառում: Որպես օրինակ ներկայացնենք 2013թ. «Չորս Ընկեր», «ՍՕՀՕ», «Պրոֆ-Իմպրոտեքս», «Նանիս» ընկերությունների գործով կայացված Հանձնաժողովի որոշումը:
213. Այդ որոշմամբ Հանձնաժողովը որոշել է պատասխանատվության ենթարկել Թուրքիա-Հայաստան ուղղությամբ բեռնափոխադրումների ոլորտում գործունեություն իրականացնող չորս ընկերությունների, որոնց բաժինները միասին, մասնավորապես տղամարդու տաբատ, կանացի տաբատ, մանկական հագուստ և կանացի բլուզ ապրանքների 2010 թվականի չորրորդ եռամսյակի և 2011 թվականի առաջին եռամսյակի ընդհանուր ներկրման ծավալում կազմել են 97.73 %: Հանձնաժողովը ապացուցված է համարել, որ ընկերությունները կայացրել են հակամրցակցային հորիզոնական գաղտնի համաձայնություն նշված ապրանքների գները արհեստականորեն մոտ երկու անգամ բարձրացնելու վերաբերյալ:
214. Անկասկած է, որ Հանձնաժողովը չուներ չորս ընկերությունների կողմից գները բարձրացնելու մասին հորիզոնական պայմանավորվածություն ձեռք բերելու փաստը հաստատող ապացույց: Այդպիսի ապացույց կհանդիսանային, օրինակ, չորս ընկերությունների ներկայացուցիչների միջև նամակագրության կամ հաղորդակցության այլ միջոցների գաղտնալսման արդյունքում ստացված տվյալները, որոնցից հստակորեն կերևար նման պայմանավորվածություն ձեռք բերած լինելու մասին կամ ականատես վկայի ցուցմունքները, ով ներկա է եղել նման համաձայնության կայացման գործողությանը կամ որևէ պայմանավորվածության վերաբերյալ գրավոր արձանագրությունները, և այլն, որոնք ուղղակիորեն կմատնանշեին նման համաձայնության կայացված լինելու փաստը: Սակայն Հանձնաժողովը նման ապացույցներ չունի և, որպես կանոն, նման ապացույցների երբեք չի դիմում: Դրա փոխարեն Հանձնաժողովը կատարում է շուկայի ուսումնասիրություն և արդյունքներից ստացված փաստական տվյալների

ամբողջությունից կատարում է մտահանգում նման համաձայնության **ամենայն հավանականությամբ** կայացված լինելու մասին: Այսինքն, Հանձնաժողովի ճանաչողական գործունեությունը հիմնված է ոչ թե իրողության հաստատմանը, այլ իրողության հավանականության հաստատմանը. առավել հավանական է, որ համաձայնություն կայացվել է, քան ոչ:

215. Տվյալ դեպքում Հանձնաժողովը խախտումը ապացուցված է համարել հետևյալ փաստական տվյալների հիման վրա. մամուլի հրապարակումները առ այն, որ նշված ապրանքների գները ամենայն հավանականությամբ արհեստականորեն բարձրացվել են, նշված ապրանքները տոնավաճառում, առևտրային այլ կետերում վաճառող առևտրականների վկայությունները, ովքեր նշել են, որ ապրանքները ներկրող ընկերություններից գնել են սովորականից երկու անգամ թանկ: Հանձնաժողովն այնուհետև ուսումնասիրել է նույնանման ապրանքների ներկրման մաքսավճարները և պարզել, որ մաքսավճարների փոփոխություն տեղի չի ունեցել, հետևաբար, գների բարձրացնումը պայմանավորված չի եղել մաքսավճարների փոփոխությամբ: Հանձնաժողովը նաև ուսումնասիրել է ընկերությունների մաքսային հսկողության և հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, իրացման գրքերը:

216. Նշված փաստական տվյալներից Հանձնաժողովը բխեցրել է եզրահանգում, որ տեղի է ունեցել գների արհեստական բարձրացում, և համարել է, որ դա ապացուցված է: Այսինքն, ապացույցը բխել է ոչ թե գները բարձրացնելու համաձայնության կայացման փաստը հաստատող ապացույցներից, այլ շուկայական, տնտեսական գործոնների հիման վրա բխեցրած եզրահանգումից, որ գներն ամենայն հավանականությամբ պայմանավորված բարձրացվել են: Այսինքն, որոշումը բխել է ոչ թե փաստի առկայությունից, այլ ենթադրությունից: Ընդ որում, հայտնի չէ, թե ապացույցի ինչ չափանիշ է կիրառվել փաստերից եզրահանգում բխեցնելիս: Հանձնաժողովի որոշումներում ապացույցի չափանիշի մասին որևէ ակնարկ կամ ցուցում բացակայում է:

217. Վերը նշվածից բխեցնում ենք, որ հորիզոնական պայմանավորվածության փաստը հաստատված է համարվել ոչ թե կոնկրետ ապացույցի հիման վրա (օրինակ՝ գաղտնի պայմանավորվածության տեղի ունեցած լինելը հաստատող փաստաթուղթ, օպերատիվ տվյալ (գաղտնալսում, ներդրված անձ, և այլն), վկայի հայտարարություն, որոշում կայացնողների նամակագրություն, և այլն), այլ ուղղակի և անուղղակի փաստերի ազատ գնահատման հիման վրա՝ նման փաստերի առատությունից բխեցնելով փաստի կանխավարկած կամ մտահանգում՝ ենթադրություն, որն էլ հանդիսացել է ապացույց:

218. Փաստերի ազատ գնահատման նման եղանակը կիրառվում է այնպիսի իրավախախտումների առնչությամբ, որոնք իրենց բնույթով քողարկված են, և դրանց

բացահայտումը չափազանց մեծ ջանքեր կպահանջի, իսկ մեծամասամբ էլ արդյունք չի տակ, եթե կիրառվեն իրավախախտման բացահայտման ավանդական եղանակներ: Հենց այդ նպատակով էլ առավել նպատակահարմար է նման իրավախախտումները բացահայտել իրավախախտման առկայությունը ամենայն հավանականությամբ հավաստող ուղղակի և անուղղակի փաստերի հիման վրա: Նման մոտեցումը հիմնված է այն գաղափարի վրա, որ ապացուցման բեռը կրող կողմի պահանջի **իրավացիությունը** առավել հավանական է, քան դրա մերժման իրավացիությունը: Այսինքն՝ դատավորը ապացույցի նման ձևաչափով որոշում կայացնելիս ոչ թե պետք է որոշի, թե որ կողմն է իրավացի, այլ, թե որ կողմի իրավացիությունն է առավել հավանական:

219. Հավանականության այս չափանիշը կիրառվում է, որպես կանոն, մրցակցային դատավարության պայմաններում և քաղաքացիական դատավարությունում, քանի որ չափազանց վտանգավոր է ապացույցի նման բեռ սահմանելը քրեական դատավարությունում: Այդուհանդերձ, քրեական բնույթի որոշ տեսակի իրավախախտումներ բացահայտելիս օգտագործվում է սկզբունքորեն նման, սակայն առավել խիստ մոտեցում՝ փաստի կանխավարկածը, ըստ որի փաստերի առատությունից բխեցվում է ոչ թե հավանականություն կամ ենթադրություն, այլ կանխավարկած, նախադատելիություն առ այն, որ տվյալ հանցագործությունը կատարվել է, քանի դեռ կասկածյալը (մեղադրյալը) հակառակը չի ապացուցում: Փաստի կանխավարկածի դեպքում ապացուցման բեռը ինքնաբերաբար անցնում է կասկածյալի/մեղադրյալի վրա՝ որպես ընդհանուր կանոնից բացառություն: Օրինակ, եթե անձին ձերբակալել են ձեռքին մեծ պայուսակով, որի մեջ հայտնաբերվել է մեծ քանակությամբ գումար, ապա անձը պետք է հաստատի այդ գումարների օրինական հիմքերի մասին, հակառակ դեպքում ինքնաբերաբար, այդ փաստի ուժով *ipso facto* կհաստատվի հակառակը՝ որ գումարների ծագումը անօրինական է, հետևաբար, տվյալ անձը զբաղվում է փողերի լվացմամբ: Այսինքն, որոշակի փաստեր նախօրոք հաստատված ուժ ունեն և, որպես կանոն, փաստի կանխավարկածը կիրառվում է լատենտային բնույթի հանցագործությունների առնչությամբ: :

220. Ապացույցի ազատ գնահատման եղանակը կիրառում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշ՝ քողարկված բնույթի իրավախախտումների առնչությամբ, օրինակ, խտրականության որոշ տեսակների կամ փակ հաստատություններում անձի նկատմամբ ոտնձգությունների գործերով և մի շարք այլ նմանատիպ խախտումներ արձանագրելու համար: Նման դեպքերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կիրառում է ապացույցի հետևյալ չափանիշը. *«ապացույցը գնահատելիս…Դատարանը, ընդհանուր առմամբ կիրառել է «ողջամիտ կասկածից վերը» ապացույցի չափանիշը: Այդուհանդերձ, ապացույցը*

կարող է նաև բխել բավականաչափ հիմնավոր, պարզորոշ ու համահունչ մտահանգումներից կամ նման անհերքելի փաստերի կանխավարկածից» (*Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի,* № 40094/05, 02.10.2012թ, § 202)։

221. Ըստ վերը նշվածի, առաջին, եթե առկա են հիմնավոր, պարզորոշ ու համահունչ փաստերի, տեղեկությունների, փաստական տվյալների **առատություն**, և, երկրորդ, եթե դրանք չեն հերքվում դատավարական մրցակցի կողմից, ապա այդ փաստերից կարելի է բխեցնել **մտահանգումներ**, ենթադրություններ, որոնք կունենան ապացույցի ուժ։ Կամ, ունենալով հիմնավոր, պարզորոշ ու համահունչ փաստերի, տեղեկությունների, փաստական տվյալների **առատություն**, դրանցից կարելի է բխեցնել փաստի **կանխավարկած**, որը կարող է ունենալ ապացուցողական ուժ։

222. Փաստերի, տվյալների, տեղեկությունների առատությունը չափվում է ապացույցի ստանդարտով՝ շեմով։ Կիրառվում են ապացույցի շեմի տարբեր մոդելներ։ Եվրոպական դատարանը սովորաբար կիրառում է «ողջամիտ կասկածից վեր» շեմը, իսկ խտրականության գործերով կիրառում է *prima facie* (առերևույթ) ապացույցի շեմը։ Այս երկուսն էլ բավականին բարձր շեմ են, և հաճախ դիմումատուները չեն կարողանում հաղթահարել նման շեմը, որի պատճառով դիմումը մերժվում է։ Անհրաժեշտ է նշել, որ վերջերս ապացույցի այս շեմը ներմուծվեց նաև ՀՀ քրեական իրավունքի տիրույթ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, որով վերջինս անձի մեղքի մասին հարցը որոշելու համար սահմանեց ապացույցների **բավարար** համակցության շեմը՝ ողջամիտ կասկածից վերը չափորոշիչով (ՀՀ վճռաբեկ դատարանի 31/10/2014թ. Արարատ Ավագյանի գործով որոշում, կետ 33)։

223. Քաղաքացիական դատավարությունում ապացույցի շեմ հասկացությունը դեռ չի ամրագրված, թեև շատ հավանական է, որ մոտ ապագայում դա տեղի կունենա։ Ինչ վերաբերում է վարչական արդարադատությանը, ապա թեև ապացույցի շեմ հասկացությունը այս ոլորտում նույնպես ամրագրված չէ, սակայն, ապացույցի ազատ գնահատման սկզբունքն ամրագրված է Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածում, իսկ փաստի կանխավարկածի սկզբունքները ամրագրված են Վարչարարության հիմունքների մասին օրենքի 10-րդ հոդվածում (հավաստիության կանխավարկած)։

224. Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի երկու դրույթները սահմանում են ապացույցի երկու ստանդարտներ Հանձնաժողովի համար։ Այդ երկու ստանդարտները արտահատում են վերը նշված երկու մոտեցումների։ Առաջին դրույթը սահմանում է շոշափելի ապացույցի ստանդարտը՝ ըստ ապացույց հասկացության ավանդական պատկերացման. հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե առկա են համաձայնության կայացված լինելը հաստատող ուղղակի փաստական **տվյալներ**՝ գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն, և այլն։ Մինչդեռ երկրորդ դրույթը

ապացույցի «հավանականության» ստանդարտի արտահայտումն է. ապացույցը բխում է ոչ թե դեպքը հաստատող փաստական տվյալից, այլ սուբյեկտի գործողություններից և վարքագծից՝ դրանց ամբողջության վերլուծությունից: Եթե առաջին մասում խոսվում է «փաստական տվյալների» մասին (որոնք են գրավոր փաստաթուղթը, գրավորը ապացույցը, տեսագրությունը, ձայնագրությունը), որոնցով հաստատվում է համաձայնության կայացված լինելու փաստը, երկրորդ մասում խոսվում է **գործողությունների** և **վարքագծի** մասին, որոնք վկայում են նման համաձայնության [ամենայն հավանականությամբ] կայացված լինելու մասին:

225. Օրենքը չի սահմանում, թե ինչ է նշանակում «վկայում» եզրը: Ավելի շուտ դա սուբյեկտիվ ճանաչողության, քան ապացույցի գնահատման մեթոդոլոգիայի հարց է, ինչպես հստակորեն սահմանված է ՀՀ դատավարական օրենսգրքերով քրեական, քաղաքացիական և վարչական արդարադատության ճյուղերում:

226. Հանձնաժողովի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննություն կատարելիս Հանձնաժողովը հիմնականում առաջնորդվում է ապացույցի երկրորդ կանոնով՝ ապացույցը անուղղակիորեն բխեցնում է սուբյեկտի **գործողություններից** և **վարքագծից,** այլ ոչ թե խախտման առկայությունը հաստատող փաստ(եր)ից:

227. Այս մոտեցումը հիմնավորում է մեր պնդումը վերևում, որ Հանձնաժողովը որդեգրել է *«ապացույցը բխում է մտահանգումներից կամ փաստերի կանխավարկածից»* սկզբունքը, որտեղ մտահանգումները կամ փաստի կանխավարկածը ձևավորվում է իրավախախտման մեջ կասկածվող անձի գործողությունների և վարքագծի ուսումնասիրությունից՝ անկախ այն հանգամանքից, թե նման գործողությունները և վարքագիծը ապացույց հասկացության դատավարական սկզբունքներով կարող են հանդիսանալ ապացույց, թե ոչ:

228. Ընդհանուր առմամբ հասկանալի է, թե ինչու է Հանձնաժողովը որդեգրել ապացույցի գնահատման երկու իրար հակասող սկզբունքներ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասում, ըստ որի մի դեպքում ապացույցը ձևավորվում է գրավոր, շոշափելի և բավարար չափով ամրագրված փաստաթղթային հիմքերից, իսկ երկրորդ դեմքում տնտեսական գործոնների վրա հիմնված ենթադրություններից ու փաստի կանխավարկածից: Մասամբ դա բխում է այն իրողությունից, որ տնտեսական անբարեխիղճ մրցակցությունը մեծամասամբ դրսևորվում է **քողարկված** եղանակով, և նման իրավախախտումը ապացույցների հավաքման ու ամրագրման ավանդական միջոցներով բացահայտելը չափազանց դժվար և մեծամասամբ անարդյունավետ կարող է լինել: Հետևաբար, առավել արդյունավետ է, երբ վարույթի ու քննության նախաձեռնումը հանձնաժողովի կողմից սկսվում է կասկածի հիման վրա, որ ընկերության արտադրանքը շուկայում զբաղեցնում է որոշակի ծավալ (որը խոսում է ընկերության հնարավոր գերիշխող դիրքի մասին), քան թե փորձել նման կասկածի առկայությունը նախ հիմնավորել գերիշխող դիրքի մասին որևէ գրավոր

ապացույցով և հետո նախաձեռնել քննություն: Կամ, առավել արդյունավետ է տնտեսական ցուցանիշների համեմատությունից բխեցնել մտահանգում, որ ընկերությունը ամենայն հավանականությամբ բարձրացրել է իր արտադրանքի գները, քան թե փորձել նման մտահանգում բխեցնել գրավոր ապացույցների հիման վրա, որոնք շատ ավելի դժվար է ձեռք բերել, քան տնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը պետական որևէ մարմնից:

229. Այդուհանդերձ, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովը իր փորձագիտական կարծիքում 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված ապացույցի չափանիշը Հանձնաժողովից կիրառելը համարել է «բավականին անսովոր մոտեցում»:[26] Ըստ նույն փորձագիտական կարծիքի, ապացույցների այդ երկու իրարամերժ ինստիտուտների ամրագրումը օրենսդրության մեջ և դրա կիրառումը պայմանավորված է երկու հանգամանքներով. առաջին, որ Հանձնաժողովը ձգտում է հանդես գալ որպես գների կարգավորող և այդ դեպքում ավելի հարմար է շուկայական տվյալների համեմատությունից բխեցնել ենթադրություն հորիզոնական պայմանավորվածության ենթադրաբար գոյության մասին, քան թե նման պայմանավորվածության գոյություն ունենալու մասին պնդումը փորձել հաստատել գրավոր ապացույցներով, օրինակ, վկաների ցուցմունքներով, գաղտնալսումներով, նամակագրությամբ, և այլն, որը շատ ավելի դժվար է իրագործել: Երկրորդ պատճառը կայանում է նրանում, որ Հանձնաժողովը ունի չափազանց թույլ ու սահմանափակ հետաքննչական գործողություններ կատարելու լիազորություններ: Օրինակ, Հանձնաժողովը իրավունք չունի կատարել խուզարկություններ, առգրավվել փաստաթղթեր ու իրեղեն ապացույցներ, կատարել անսպասելի ռեյդեր տվյալներ հայտնաբերելու և ապացույցներ ամրագրելու (առգրավելու) համար և այլն:[27]

230. Արդյունքում, Հանձնաժողովը ստիպված է բավարարվել հիմնականում օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված ապացույցի կանոնով՝ գործելով ենթադրությունների, մտահանգումների և փաստի կանխավարկածի հիման վրա: Եթե խոսքը գնում է գրասենյակային պայմաններում հետաքննություն կատարելու եղանակի մասին, ապա վերը նշվածը բավականին հարմար ապացույցի ստանդարտ է: Փաստորեն, Հանձնաժողովը անբարեխիղճ մրցակցության փաստը հաստատում է ոչ թե փաստի առկայությունը ուղղակիորեն հաստատող ապացույցով, այլ տնտեսական գործոններից բխեցրած ենթադրություններով: Ամբողջ հարցը

[26] Տե՛ս ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերով համաժողովի կողմից կազմված «Հայաստանի օրինակով մրցակցության քաղաքականության վերաբերյալ կամավոր փորձագիտական գնահատման զեկույց». Նյու Յորք և Ժնև 2010: Կետ 26-ում: Ամբողջական տեքստը հասանելի է.
http://unctad.org/en/Docs/ditcclp20101overview_en.pdf

[27] Կետ 24-29:

կայանում է նրանում, որ Հանձնաժողովը **հավասարապես «ապացույց» է համարում և՛ գրավոր ապացույցը, և՛ ենթադրությունը:**

2. Համապատասխանությունը վարչարարության սկզբունքներին

231. Հանձնաժողովի կողմից օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիմքով ապացույցի ստանդարտի կիրառումը խնդրահարույց է, քանի որ դա բախվում է վարչարարության հիմնարար սկզբունքների հետ և որպես այդպիսին բարձրացնում են մարդու հիմնարար իրավունքների խախտման հարց:
232. Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիմքով ապացույցի շեմը, որը Հանձնաժողովը պետք է հաղթահարի խախտում արձանագրելու նպատակով, էապես ցածր շեմ է, քանի որ Հանձնաժողովը կարող է բավարարվել անուղղակի կամ ուղղակի փաստերից (այլ ոչ թե ապացույցներից) բխեցրած ենթադրությամբ, այլ ոչ թե վերաբերելի, արժանահավատ, և ընդունելի ապացույցների բավարար համակցությամբ:
233. Նման ցածր շեմը Հանձնաժողովին հեշտությամբ հաջողվում է հաղթահարել նույնիսկ առանց որևէ հետաքննչական, քննչական գործողություններ կատարելու՝ հիմնվելով միայն գրասենյակային պայմաններում ստացված շուկայական տվյալների և պետական մարմիններից ստացված որոշ նվազ ծավալի տեղեկատվության վրա: Եթե դրան էլ հավելենք այն, որ պահանջի դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձինք պարտավոր են տրամադրել տեղեկատվություն, և որ նման տեղեկատվության չտրամադրման համար օրենքով նախատեսված են խոշոր տուգանքներ (որոնք արդարացի չի լինի կոչել տույժ՝ հաշվի առնելով դրանց խոշոր չափերը), ինչպես նաև, որ Հանձնաժողովի որոշումների զգալի մասը վերաբերում է տեղեկատվություն չտրամադրելու համար խոշոր տուգանքների սահմանելուն, ապա ակնհայտ է, որ վարույթի մեկնարկի պահին Հանձնաժողովն ի սկզբանե ձեռք է բերում դոմինանտ կարգավիճակ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:
234. Խախտված հավասարակշռությունը վերականգնելու համար առաջարկվում է վերանայել երկու պայման կամ առնվազն դրանցից մեկը:

2.1. Ապացույցի ստանդարտի վերանայում

235. Առաջին, անհրաժեշտ է վերացնել Հանձնաժողովի ապացույցի ստանդարտը սահմանված Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և ուժի մեջ թողնել միայն նույն դրույթի 1-ին կետով սահմանված ապացույցի ստանդարտը: Այս դեպքում էապես կբարձրանա ապացույցի շեմը, որի արդյունքում կբարձրանա նաև քաղաքացիների և

իրավաբանական անձանց պաշտպանվածությունը կամայականություններից ու անորոշությունից: Էապես կփոխվի վարույթի բնույթը, այն առավելապես կհիմնվի ոչ թե տնտեսական գործոնների վերլուծությունից բխեցրած մտահանգման վրա գների փոփոխման նպատակահարմարության մասին, այլ դատավարական իմաստով ապացույցի վրա առ այն, որ տեղի է ունեցել հորիզոնական պայմանավորվածություն տնտեսվարող սուբյեկտների միջև:

236. Նույն մոտեցումը առաջարկվում է կիրառել նաև այլ տեսակի իրավախախտումների, մասնավորապես, մենաշնորհ կամ գերիշխող դիրքը չարաշահելու և անբարեխիղճ մրցակցության իրավախախտումները հետաքննելու պարագայում: Հանձնաժողովի հետաքննությունը պետք է ուղղված լինի փաստով ամրագրված ապացույցի ամրագրմանը, այլ ոչ թե տնտեսական գործոնների վերլուծության հիման վրա ենթադրություն կառուցելը առ այն, որ ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել իրավախախտում:

2.2. Վարչարարության վերանայում

237. Եթե ընդունենք, որ Հանձնաժողովին օբյեկտիվորեն անհրաժեշտ է ապացույցի ցածր շեմ ունենալ երկու պատճառով, առաջին, որ Հանձնաժողովը ստիպված է պայքարել թաքնված, լատենտային բնույթի իրավախախտումների դեմ, երկրորդ, որ Հանձնաժողովը չունի քննչական, օպերատիվ-հետախուզական գործառույթներ (ինչպես արդեն նշվեց վերևում), ապա խախտված հավասարակշռությունը պետական մարմնի և քաղաքացու միջև կարող է վերականգնվել հօգուտ լիակազմ վարչարարության՝ իր ողջ գործիքակազմով:

238. Վարչարարության հիմունքների մասին օրենքում սահմանված են բազմաթիվ կառուցակարգեր, որոնք կոչված են ապահովելու հավասար ու արդարացի պայմաններ կողմերի՝ քաղաքացու և վարչական մարմնի միջև՝ որոշ դեպքերում քաղաքացուն տալով վարույթային արտոնություններ՝ հաշվի առնելով, որ քաղաքացին իր ռեսուրսներով երբեք չի կարող ի սկզբանե հավասար պայմաններում գտնվել պետական, վարչական մարմնի հետ:

239. Այդպիսի արտոնություններից մեկը ապացույցի բեռն է, որը վարչարարության պայմաններում մեծամասամբ պետական մարմնի վրա է: Վարչարարության պայմաններում քաղաքացու վրա, որպես կանոն, չի դրվում ապացույց ներկայացնելու պարտականություն: Դա բխում է այն սկզբունքից, որ քաղաքացու և վարչական մարմնի հնարավորությունները, այդ թվում նաև ապացույց որոնելու, գտնելու և ամրագրելու գործում, ի սկզբանե անհավասար է և քաղաքացին ի սկզբանե անհավասար վիճակում է գտնվում վարչական մարմնի համեմատ:

240. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քողարկված բնույթի իրավախախտումներ քննելիս սահմանում է ապացույցի բեռի բաշխման կանոնը, ինչպես արդեն նշվել է վերևում, համաձայն որի հայցվորը կրում է միայն փաստեր ներկայացնելու պարտականություն և երբ փաստերի ամբողջությունը հատում է որոշակի քանակական և որակական *prima facie* շեմ, ապացուցման պարտականությունը փոխանցվում է պետական մարմնի վրա և վերջինս կրում է պարտականություն ապացուցելու հակառակը՝ ոչ թե փաստերով ու ենթադրություններով, այլ ապացույցով:
241. Հետևաբար, երբ Հանձնաժողովը, օրինակ, «Հիքսոս» ՍՊԸ գործով նշում է, որ ընկերությունը չի ներկայացրել ապացույց իր կողմից գովազդվող ապրանքում վկայակոչված «լավագույն շեֆ-խոհարարների» լավագույնը լինելու մասին, դրանով իրավաբանական անձի համար սահմանում է անիրավաչափ պարտականություն, որը հակասում է վարչական վարույթի առարկային ու նպատակին:
242. Ապացուցման բեռը նրա վրա է, ով հերքում է այլ ոչ թե նրա վրա, ով պնդում: Այս սկզբունքը բխում է Վարչարարության հիմունքների մասին օրենքի 10-րդ հոդվածից, ըստ որի վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի **բոլոր դեպքերում**, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցում: Հետևաբար, Հանձնաժողովը չի կարող ապացույց բխեցնել քաղաքացու կողմից չհերքված փաստի կանխավարկածից: Ընդհակառակը, քաղաքացին կարող է ապացույց բխեցնել վարչական մարմնի կողմից չհերքված փաստի կանխավարկածից:
243. Վարչարարության 10-րդ հոդվածի սկզբունքը Հանձնաժողովի կողմից չի կիրառվում, մինչդեռ դա կարևոր հակակշռող գործոն է, որպեսզի վերականգնվի խախտված հավասարակշռությունը:
244. Հանձնաժողովը չի կիրառում վարչարարության մի շարք կարևոր սկզբունքներ նույնպես, որոնք առավել անհավասար պայմաններ են ստեղծում կողմերի համար: Չի հանդիպել որևէ որոշում, որում Հանձնաժողովը վկայակոչած լինի այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսին են միջամտող գործիքների համաչափությունը, անհրաժեշտությունը, միջոցների և նպատակի միջև ռացիոնալ կապի անհրաժեշտությունը, միջամտող գործիքների նպատակահարմարության և, վերջապես, անհատական և ընդհանուր շահերի միջև անհրաժեշտ փոխհավասարակշռություն սահմանելու անհրաժեշտությունը:
245. Հանձնաժողովը կաշկանդված չէ վարչարարության ժամկետներով, թեև իրականացնում է վարչարարություն: Թեև առկա է դատական որոշում առ այն, որ Օրենքը չի սահմանում վարույթային ժամկետային սահմանափակումներ, սակայն դատարանը չի սահմանել, թե որ սկզբունքի և որ օրենքի հիման վրա է սահմանվել, որ

Հանձնաժողովը հետաքննություն իրականացնելիս կարող է օգտվել առանձնացված վարույթ իրականացնելու արտոնությունից։

246. ՀՀ իրավական համակարգում կան իրավահարաբերություններ, որոնք կարգավորվում են առանձնացված վարույթներով։ Օրինակ, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթը, որի արդյունքում ընդհուպ կարող են դադարեցվել անձի լիազորությունները և արդյունքում քաղաքացին զրկվել աշխատանքից, կարգավորվում են ընդհանուր իրավասության դատարանների վարույթներից դուրս՝ Արդարադատության խորհրդի (ԱԽ) կողմից իրականացվող առանձնացված վարույթով։ Նման վարույթը ունի դատավարական հատկանիշներ, հետևաբար, դատարանի մատչելիության իրավունքի հարց այստեղ չի ծագում։ Սակայն էականը նշված օրինակում այն հանգամանքն է, որ առանձնացված վարույթի հիմքերը և դրա ընթացակարգերը հստակորեն սահմանված են օրենքով (բերված օրինակում՝ Դատական օրենսգրքով), մինչդեռ որևէ օրենքով սահմանված չէ, թե ինչու Հանձնաժողովը հետաքննություն իրականացնելիս և խախտում արձանագրելիս չպետք է այդ ամենը կատարի Վարչարարության հիմունքների մասին օրենք օրենքով սահմանված կարգով։

247. Դատարանը իր դիրքորոշումը պատճառաբանել է այն հիմնավորմամբ, որ Օրենքում սահմանափակող որևէ նորմ չկա։ Մինչդեռ մենք գտնում ենք, որ եթե սահմանափակող նորմը բացակայում է, պետք է կիրառվի ընդհանուր օրենքը՝ Վարչարարության հիմունքների մասին օրենք, որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես *Lex Generalis*, իսկ Օրենքը՝ *Lex Specialis*. Հակառակ դեպքում ստացվում է, որ Հանձնաժողովը կիրառում է լիազորություններ, որոնց իրավունքը չունի օրենքով։

248. Ավելին, խնդիրը բարձրացնում է իրավական որոշակիության հիմնարար սկզբունքի մասին հարց։ Հանձնաժողովը խախտում արձանագրելիս օգտվում է վարույթային այնպիսի նորմերից, որոնք օրենքով հստակ սահմանված չեն։ Եթե արձանագրված խախտման նյութաիրավական հիմքերը հստակորեն սահմանված են Օրենքում և համապատասխան նորմերը այդ օրենքից վկայակոչված են Հանձնաժողովի որոշումներում, ապա որոշումներում չեն վկայակոչվում վարույթային դրույթները, որոնց մի մասի վրա մենք կանգ առանք վերևում, օրինակ՝ վարույթային ժամկետները, կիրառված ապացույցի չափանիշները, լսված լինելու իրավունքի ապահովումը, կողմերի իրավահավասարության նվազագույն պայմանների ապահովումը, և այլն։ Ավելին, որոշումներում, ինչպես արդեն նշվեց, ընդհանրապես հղում չկա վարչարարության հիմնարար սկզբունքների վրա, որոնց մեծ մասը մարդու հիմնարար իրավունքի տարրեր են պարունակում, ինչպես օրինակ ձևական պահանջները չարաշահելու արգելքը, կամայականության արգելքը, վարչարարության համաչափությունը, հավաստիության կանխավարկածը, և այլն։

249. Վերը նշվածը ոչ միայն բարձրացնում է հիմնարար իրավունքների խախտման հարց, այլ նաև դժվարացնում է Հանձնաժողովի որոշումների բողոքարկումը, քանի որ անհնարին է արդյունավետ կերպով բողոքարկել այդ որոշումները վարչական դատարան այն դեպքում, երբ որոշումները չեն կայացվել վարչարարության իրավունքի գործիքակազմով:
250. Վերևում, համապատասխան բաժնում, վերլուծված են Հանձնաժողովի կողմից վարչարարության մի շարք այլ հիմնարար սկզբունքների անտեսման օրինակներ, և մենք այստեղ դրանց վրա մանրամասնորեն կանգ չենք առնի: Հիմնական գաղափարը, որը զարգացնում ենք այս բաժնում, կայանում է նրանում, որ ապացույցի թույլ ստանդարտ կիրառելու պայմաններում որպես հակակշիռ, որպես խախտված հավասարակշռությունը վերականգնելու եղանակ Հանձնաժողովը պետք է վարույթն իրականացնի վարչարարության եղանակով, հակառակ դեպքում քաղաքացիները և կազմակերպությունները զրկվում են իրավական պաշպանության արդյունավետ միջոցների հնարավորությունից և նրանք վարույթի հենց սկզբում հայտնվում են էապես անբարենպաստ վիճակում Հանձնաժողովի համեմատ:
251. Վարչարարությունը, որպես հակակշիռ օգտագործելու անհրաժեշտությունը առավել էական է դառնում, եթե հաշվի առնենք Օրենքով սահմանված տույժերի մեծ չափերը և բնույթը՝ դրանց «քրեական» մեղադրանք ինքնավար մեկնաբանության լույսի ներքո: Հայտնի է, որ ՄԻԵԴ-ը հակված է ինքնավար մեկնաբանության ուժով տույժերի մեծ չափերը համարել որպես քողարկված բնույթի քրեական մեղադրանք (Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի (գանգատ № 21638/03) 20.12.2007թ):
252. Եթե վերը նշվածին էլ հավելենք, որը Հանձնաժողովը 2013 թվականից ի վեր չի հրապարակում իր որոշումները, ստացվում է, որ Հանձնաժողովը մեծամասամբ դուրս է գտնվում հանրային վերահսկողության շրջանակներից: Որոշումների հրապարակման նկատմամբ բացարձակ, առանց ընտրության արգելքը ինքնին խնդրահարույց է: Իրավաչափ կլինի, եթե որոշումները չհրապարակելու որոշումները Հանձնաժողովը կայացնի անհատական սկզբունքով, հակառակ դեպքում խախտվում է համաչափության, անհրաժեշտության սկզբունքները:

10. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

253. Հանձնաժողովը իր գործունեության ընթացքում որևէ կերպ չի միջամտել պետական մարմինների աշխատանքին, մինչդեռ դա Հանձնաժողովի գործառույթներից է: Հանձնաժողովը լիազորված է իրականացնել ուսումնասիրություն և տալ եզրակացություններ պետական մարմինների կողմից իրականացված մրցույթների, կնքվող պայմանագրերի վերաբերյալ, պետական օժանդակությունը ոչ իրավաչափ ճանաչելու, դադարեցնելու, պաշտոնատար անձանց պատասխանատվության

ենթարկելու, դիմելու դատարան և այլն: Այս գործողությունները կնպաստեն տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրական նպատակները իրականացնելուն, կբարձրացվի Հանձնաժողովի դերը հասարակությունում, ինչպես նաև կվերացվեն այն արհեստական խոչընդոտները, որոնք առկա են կոնկրետ ոլորտներում:

254. Հանձնաժողովը կարող է ավելի կիրառելի դարձնել վարչական փոխօգնության ինստիտուտը և համապատասխան տեղեկատվության անհրաժեշտության դեպքում դիմել պետական մարմիններին: Հնարավորինս տնտեսվարող սուբյեկտներին տեղեկատվություն տրամադրելու պարտավորությունից ազատելով՝ չի միջամտի՝ «իր դեմ ապացույց ստեղծելու պարտականությունից ազատ լինելու» իրավունքին, ի վերջո՝ կխթանվի անձանց ազատ գործելու իրավունքի իրացումը: Հանձնաժողովը կարող է համապատասխան ծրագրային միջոցներով ավելի հեշտությամբ և ավելի քիչ ռեսուրսներ ծախսելով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, որը ավելի կպարզեցնի վարչարարությունը և անձինք կոնկրետ պատասխանատվության կենթարկվեն տնտեսական մրցակցության օրենսդրությունը խախտելու համար, այլ ոչ թե Հանձնաժողովի հետ կապված հարաբերություններում ընթացակարգային նորմեր, ժամկետներ խախտելու համար:

255. Օրենքում առաջարկում ենք սահմանել կոնկրետ ուսումնասիրություն իրականացնելու ընթացակարգը, պայմանները և իրավական կարգավորումները: Ներկայիս իրավիճակում այդ հարաբերությունը կարգավորվում է թերի «Ստուգումների կազմակերպման և անցկացման» մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով, մինչդեռ օրենքում այդ հարաբերությունը հիմնական կարգավորում է հարկային իրավահարաբերության համար (կամերալ ստուգումներ և այլն): Ուսումնասիրության նպատակը, իրավական ընթացակարգը, լիազորությունները ուսումնասիրության ընթացքում, եզրափակիչ մասը պետք է կարգավորվեն հստակ, որպեսզի իրավահարաբերության մասնակիցների համար այն լինի հնարավորինս կանխատեսելի:

256. Օրենքում առաջարկում ենք սահմանել կոնկրետ ստուգումներ իրականացնելու ընթացակարգը հատուկ գլխով: Որտեղ սահմանված կլինեն ստուգումների նպատակը, իրավական ընթացակարգը, լիազորությունները ստուգման ընթացքում, եզրափակիչ մասը, պայմանները և իրավական կարգավորումները: Ստուգումների ենթարկվող տնտեսվարող սուբյեկտների ցանկի ընտրության կարգավորումը և համապատասխան ցանկերի տարեկան կտրվածքով հրապարակումը, ինչպես դա կատարվում է հարկային հարաբերությունում: Դա չի կարող խոչընդոտ հանդիսանալ Հանձնաժողովի կողմից հսկիչ գնումների իրականացման համար:

257. Օրենքում առաջարկում ենք կոնկրետ սահմանել ստուգման և ուսումնասիրության առավելագույն և նվազագույն ժամկետները: Ինչպես նաև այդ ժամկետների մասով

բացառություններ, որոշակի փաստական հանգամանքների դեպքում: Ստուգման ժամկետի այսօրվա սահմանումը գործնականում խախտվում է և անհրաժեշտ է լինում ավելի երկար ժամկետ, այսպիսով՝ այն անհրաժեշտ է վերանայել: Անհրաժեշտ է սահմանել նաև ուսումնասիրության և ստուգման հետ կապված հարաբերությունը, երբ Հանձնաժողովը իրականացնում է ուսումնասիրություն և արդեն իսկ անհրաժեշտություն է առաջանում անցնել ստուգման, հստակ ընթացակարգավորել այդ անցման փուլը ժամկետներով և պայմաններով:

258. Օրենքում առաջարկում ենք սահմանել պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներ: Անձինք իրավունք ունեն կանխատեսելու, որ որոշակի ժամկետից հետո անձը այլևս չի ենթարկվի պատասխանատվության, չի սահմանափակվի իր իրավունքը և ազատությունը: Այդ կարգավորումը կարևոր է նաև նրանով, որ ժամանակի ընթացքում կորցվում են ապացույցները, մոռացվում են փաստերը, փաստաթղթերը և այլն: Արդյունքում անձինք կորցնում են պաշտպանության միջոցները և այլևս չեն կարող պաշտպանել իրավունքները:
259. Օրենքում առաջարկում ենք կարգավորել ուսումնասիրության և/կամ ստուգման կասեցման իրավական ընթացակարգը սահմանելով կասեցման կոնկրետ դեպքերը և կասեցման առավելագույն ժամկետները: Կասեցումը պետք է լինի բացառություն ընդհանուր կանոնից՝ ստուգման և ուսումնասիրության ընդհանուր ժամկետներով անցկացումից:
260. Հանձնաժողովի գործունեությունը պետք է լինի թափանցիկ. քաղաքացիները իրավունք ունեն հետևել Հանձնաժողովի գործունեությանը: Հանձնաժողովի կողմից «փակ» աշխատանքը չի բխում այն սկզբունքներից և նպատակներից, որն իր առջև դրել է Հանձնաժողովը: Հանձնաժողովը համատարած ենթարկում է տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության, տեղեկատվություն չտրամադրելու համար հղում կատարելով հանրային շահին, և Հանձնաժողովը հանրային շահից նույնպես պետք է կրի պարտավորություն հանրությանը տեղեկատվությամբ ապահովելու համար: Ընտրողական տվյալներով կազմված Հանձնաժողովի տարեկան զեկույցները չեն կարող լինել եզրափակիչ տեղեկույթ:
261. Ժամանակակից աշխարհում ստեղծվել են այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ցանկացած միջազգային կազմակերպության մուտք գործել երկրի շուկա: Այդ գործընթացը իրականացվում է հիմնականում ինտերնետի միջոցով, որի հիման վրա էլ շուկայում կան բազմաթիվ միջնորդ կազմակերպություններ, որոնք ապահովվում են ոչ ռեզիդենտ-սպառող կապը, ապահովելով ապրանքի մատակարարումը Հայաստան: Այսպիսով, ապրանքային շուկան ներկայիս իրավիճակում տարբերվում է այն դասական շուկայից, որի ժամանակ ընդունվել է օրենքը: Առաջարկում ենք օրենսդրական մակարդակում համապատասխան ամրագրումներ ապրանքային շուկայի որոշման կանոնների

մեջ, հաշվի առնելով միջազգային շուկայի հասանելիությունը ներպետական շուկայում:

262. Առաջարկում ենք հրապարակել Հանձնաժողովի բոլոր որոշումները, որոնք հնարավորություն կտան տնտեսվարող սուբյեկտներին համապատասխանել իրենց վարքագիծը կոնկրետ Հանձնաժողովի որոշումներին և վարչաիրավական վարքագծին: Որոշումները չհրապարակելու որոշումները պետք է ընդունվեն ոչ թե համատարած կերպով և a prioir, այլ կոնկրետ գործերով՝ տվյալ գործի հանգամանքների ելնելով: Հանձնաժողովի որոշումները հրապարակվել են մինչև 2013 թվականը, որն որևէ խնդիր չի առաջացրել, ավելին՝ այն հնարավորություն է տվել կատարել համապատասխան վերլուծություններ, ուսումնասիրություններ և տալ համապատասխան գնահատականներ:

263. Հանձնաժողովը իր գործունեության ընթացքում, հիմնականում, որպես վարչարարության թիրախ, ընտրել է փոքր և միջին բիզնեսը կոնկրետ տնտեսական գործունեության ճյուղերում: Առաջարկում ենք Հանձնաժողովի գործունեության մեջ ներգրավել նաև բանկային, գրավատնային, վարկային, տարադրամի փոխարժեքների փոխանակման, պետական գնումների ոլորտում աշխատող կազմակերպություններին: ՀՀ Կենտրոնական բանկը չի իրականացնում սպառողների շահերի պաշտպանություն, որը բացահայտվում է ԿԲ-ի կողմից տրված տարբեր պարզաբանումների մեջ: Հանձնաժողովը, որն իր գործնական գործունեությամբ իրականացնում է գլխավորապես սպառողների իրավունքների պաշտպանություն, պետք է նաև մուտք գործի այս ոլորտի կազմակերպությունների իրավահարաբերության մեջ: Հանձնաժողովի խիստ որոշակի ոլորտների հետ աշխատանքը լիարժեք չի նպաստի Օրենքով ամրագրված նպատակների իրականացմանը, քանի որ շուկայում տնտեսական իրավիճակը խիստ փոխկապակցված է:

264. Առաջարկում ենք Հանձնաժողովի վարչարարության խիստ բևեռացման փոփոխություն, համաչափության կիրառում, ինչպես նաև տեղեկությունների պահանջման գործիքակազմի փոփոխություն: Սպառողների իրավունքների պաշտպանության իրականացմանը զուգահեռ իրականացնել հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման, գերիշխող և մենաշնորհ դիրքի չարաշահման, միաձուլման, ինչպես նաև պետական մարմինների կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ ուսումնասիրություններ, ստուգումներ և այլ համարժեք միջոցառումների իրականացում: